ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՎԵՐՋ ՓՆԹԻՈՒԹՅԱՆԸ և ԻՄԻՋԻԱՅԼՈՑՈՒԹՅԱՆԸ

Վահե Գարոյան

Ծրագիրը նախատեսված է որպես լրացում Երևանում իրականացվող բարեփոխումների և բարեկարգումների ծրագրերին: Ծրագրի առանցքն է քաղաքաբնակների կենցաղային և էսթետիկական անվտանգության բարձրացումը: Ծրագիրը հեղինակի տարիների անձնական դիտարկումների, քաղաքաբնակների լայն զանգվածի հարցումների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունք է: Սույն Ծրագիրը գրվել է 2010թ. և ներկայացվել Երանի քաղաքապետարան, սակայն վերջինիս կողմից ընթացք չի տրվել: Ներկայացվում է արդիականացված տարբերակը:

vahegaro@yahoo.com
www.vahegaro.wordpress.com
Tel. +374 91 213129
11 Փետրվար, 2019

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 2
2. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացությունները 4
3. Ծրագրի տևողություն և փուլերի իրականացման ժամանակահատվածներ 5
4. Ծրագրի իրականացում 6
4.1. Առաջին փուլ. 9
4.2. Երկրորդ փուլ. 12
4.3. Երրորդ փուլ. 15
5. Հասարակության հետ համագործակցություն 19
5.1. Հիվանդ և պարզունակ մտածելակերպ 20
6. Գույքահարկի մասին ՀՀ Օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն. բնակֆոնդի պահպանման վճարների չափերի վերանայում 22
7. Ստորաբաժանման (պետական մասնակցությամբ կազմակերպության) կառուցվածքն և բյուջեն 26
Հավելված 1 29

1. Ընդհանուր դրույթներ

- ✓ Ծրագիրը ուղղված է երևանցիների առօրյա կյանքի հարմարավետության, անվտանգության, էսթետիկ գրավչության և բարեկեցության բարձրացմանն ու ապահովմանը:
- ✓ Ծրագրի նպատակն է՝ քաղաքի փողոցներից և հասարակական այլ վայրերից անփութության, իմիջիայլոցության, անտարբերության, անտրամաբանության, տգեղության, անհամապատասխանության դրսևորումների և ներդաշնակության պակասի վերացումը:
- ✓ Ծրագիրը հանդիսանում է տարիների հետևողական դիտարկումների, ուսումնասիրությունների, հետազոտությունների, բազմաբնույթ հարցումների արդյունք:

Երևանի վերջի տարիների լայնածավալ կառուցապատումը պատկերում է մեր քաղաքին գեղեցիկ և ժամանակակից տեսք: Բարեկեցիկ Երևանը երևանցիների հպարտության և ուրախության առիթն է: Ցավոք ոչ բոլոր քաղաքաբնակներն են նպաստում քաղաքի շենացմանը, իսկ քաղաքաբնակների շարքին են դասվում նաև այնպիսի «անձիք», որոնց, մեղմ ասած, «քաղաքաբնակ» լինելը և կոչվելը այդքան էլ արդարացված չէ: Նման «քաղաքաբնակների» գործողությունները ուղղված չեն քաղաքի բարելավմանը. նման անբարեխիղճ քաղաքաբնակների բացասական արարքներից բարեխիղճ քաղաքաբնակների առօրյան մեղմելու և անվտանգելու նպատակ է հետապնդում սույն Ծրագիրը: Ծրագիրն ուղղված է լինելու թե սովորական քաղաքաբնակների, թե որոշում կայացնելու իրավասությամբ օժտված պաշտոնյաների կողմից ապօրինի, ոչ խելամիտ, առողջ տրամաբանությունից զուրկ, անտարբերության քողով պատված գործողությունների և որոշումների նվազեցմանը:

Քաղաքային իշխանությունների կողմից այժմ իրականացվում են քաղաքի բարելավմանն ուղղված լայնածավալ աշխատանքներ, սակայն, պատշաճ ուշադրություն չի դարձվում աշխատանքները ավարտին հասցնելուն և արդյունքների պահպանմանը: Պարեկային ծառայությունը, ում անմիջական պարտականությունների ներքո է գտնվում քաղաքային, հասարակական ունեցվածքի պահպանման խնդիրը հաճախակի թերանում է իրենց պարտականությունների իրականացման գործում: Ցավոք, հաճախակի ականատես ենք լինում պարեկային ոստիկանների անտարբերությանը՝ նրանք ոչ մի կերպ չեն արձագանքում հասարակական ունեցվածքի փչացման և ոչնչացման փաստերին: Բերման չեն ենթարկվում քաղաքային ունեցվածքը ոչնչացնողները, նրանց չեն տուգանում և պատժում:

Ենթադրելի է, որ քաղաքի տնտեսությունում նկատվող միջոցների սակավությունը չափազանց կդժվարացնի Ծրագրի իրականացումը, սակայն, մեր քաղաքաբնակների գիտակից և նվիրյալ հատվածի ձգտումը շտկելու բացթողումները, նրանց համոզմունքը, որ Երևանը պետք է զբաղեցնի իր ուրույն տեղը աշխարհի ամենագեղեցիկ և անվտանգ քաղաքների շարքում լիցքավորում է մեզ ուժով ու եռանդով և պարտադրում նման Ծրագրի նախաձեռնումը:

Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել բնակչի կենցաղային անվտանգությունը և իր բնակվելու միջավայրից էսթետիկական, բարոյական և հոգևոր բավականություն ստանալը:

Նշված բոլոր միջոցառումների համատեղումը, դրանց իրագործման համակարգումը խմբավորվում է **ՔԱՂԱՔԱԲՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** հասկացության ներքո:

Կենցաղային անվտանգությունը ընդգրկուն հասկացություն է: Կենցաղային անվտանգությանը ներկայացվող պահանջները, չափանիշները տատանվում են ըստ երկրների: Ծրագիրը մշակելիս ուսումնասիրվել են Եվրոպական, Հյուսիս Ամերիկյան, Արաբական Էմիրության երկրների և Սինգապուրի փորձը:

Սույն Ծրագիրը նպատակաուղղված է քաղաքաբնակների լայն շրջանակներ ներգրավել քաղաքի բարելավման գործընթացին:

Ծրագրի իրագործման հետևողականությունը, նրա լայնածավալ լուսաբանումը ՀԼՄ-ներում կնպաստի նաև աճող սերունդները բարեկիրթ քաղաքացի դաստիրակելու գործընթացին: Համոզված եմ, որ ոչ բարեխիղճ քաղաքաբնակների կողմից ներկայումս կատարվող անփութության, անտարբերության, իմիջիայլոց վերաբերմունքի և պարզապես վնասակար արարքներից շատերը կմնան անցյալում:

Ծրագրի բովանդակությունն և մասնակից կողմերի փոխկապվածությունը սխեմատիկ պատկերվում է այսպես.

Նկար 1



2. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացությունները

Քաղաքաբնակների կենցաղային անվտանգություն՝

- քաղաքաբնակների կյանքին և առողջությանը անմիջական վտանգ ներկայացնող քաղաքի փողոցներում և բակերում անփույթ տեղադրված սուր և վտանգավոր առարկաների վերացում, չպարսպապատված նկուղների մուտքերի և նմանատիպ այլ վտանգավոր հանգույցների վերացում, կտուրներին պատշաճ կերպով չամրացված, ժամանակի ընթացքում անսարքության եկած ծածկի էլեմենտների, կղմինդրների և ալեհավաքների հավաքում և դրանց վայր ընկնելու վտանգի վերացում;
- մայթերի վերականգնումը ապօրինի կառուցված շինությունները մասնակի ապամոնտաժելով. երթևեկելի մասերը մնում են իրենց նախագծային չափսերին;
  - մայթերի լայնացումը ապօրինի նեղացված մասերում;
- ապագայում, նոր կառուցապատումների ընթացքում նախագծերի համաձայնեցումը կենցաղային անվտանգության պահանջներին;
- հասարակական տրանսպորտ՝
  - հասարակական տրանսպորտի կանգառների վայրերի ճիշտ ընտրությունը[1i];
  - երթուղային տաքսիների նստատեղերի ձևափոխումների արգելումը և այլն;

Էսթետիկական անվտանգություն՝

- քաղաքի արտաքին գրավչությունը և գեղեցկությունը, քաղաքաբնակներին տհաճություն ներկայացնող երևույթների վերացում.
  - քաղաքի բոլոր, անկախ նրանից կենտրոնում են թե ծայրամասերում, ճարտարապետական գեղեցիկ լուծումներով, մասնավորապես 1935-1975թթ. կառուցված շենքերի նախնական արտաքին, մասնավորապես ճակատային, տեսքի (ֆասադների) վերականգնում: Այն է՝ ցանկացած ներս ընկած փակված պատշգամբների բացում և շենքի ճարտարապետական լուծումների վերականգնում, փակված կամ նեղացված պատուհանների փակված մասերի համապատասխանեցում հիմնական ֆասադի հետ, եթե դրանից չի տուժում կառույցի ամբողջական ընկալումը (նույն շինարարական նյութերի և տեխնիկական լուծումների կիրառմամբ), մանսարդների կառուցում հիմնական ֆասադին համահունչ և այլն;
  - շենքերի պատերին, հասարակական տրանսպորտի կանգառասրահներում, լուսասյուներին, անձրևատար խողովակներին փակցված մասնավոր հայտարարությունների մաքրումը և դրանց փակցնելու համար տուգանքի սահմանումը;
  - հասարակական վայրերում աղմուկի արգելումը: Կենցաղային նշանակություն ունեցող իրերի ձայնային հայտարարման և վաճառքի արգելում բակերում:

Լիազոր կազմակերպություն (ստորաբաժանում)՝

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար ստեղծվող կազմակերպություն, որի կազմակերպաիրավական կարգավիճակը դեռ որոշված չէ:

[1] Մանրամասն ներկայացված է լուսանկարներով Ծրագրի հավելված հանդիսացող սկավառակում:

3. Ծրագրի տևողություն և փուլերի իրականացման ժամանակահատվածներ

Ծրագրի իրականացումը նախատեսվում է երեք փուլով: Դրանց տևողությունը հետևյալն է՝

Առաջի փուլ.

2019թ. հունվարի 15-ից մինչև 2019թ. մարտի 31-ը:

Հասարակության տեղեկացում Ծրագրի մեկնարկի մասին: Հարցին առնչվող օրենսդրության լրացումների և փոփոխությունների քննարկումներ քաղաքաբնակների հետ: Քաղաքային տնտեսությանը վերաբերող նորմատիվ բազաների թարմացում: Քաղաքի ապագայի վերաբերյալ քաղաքաբնակների հարցումների անցկացում: Օժանդակում քաղաքի հարցերով զբաղվող հասարակական կառույցների ստեղծմանը:

Քաղաքաբնակներին առաջարկվելու է ուղարկել իրենց կողմից նկատված թերությունների լուսանկարները և արձանագրությունները լիազոր կազմակերպության հասցեով:

Երկրորդ փուլ.

2019թ. ապրիլի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը: Ձմեռային ամիսներին աշխատանքները չեն ընդհատվում: Այդ ամիսներին կատարվում են շքամուտքերի, շինությունների ներքին վերանորոգման աշխատանքները:

Ժամանակահատվածը ընտրված է կարճ մեծ ծավալով աշխատանքներ կատարելու համար: Սակայն նախատեսվում է, որ խախտումներ կատարած անձանցից շատերը ինքնուրույն, մինչ ստեղծվող կազմակերպության աշխատակիցների միջամտումը, կվերացնեն իրենց կողմից կատարված թերությունները պատժամիջոցներից խուսափելու համար:

Կարևորը համախմբել հասարակությունը և ստեղծել հասարակական մեծ շարժում անփութություն-ների և հասարակական ունեցվածքի փչացնողների դեմ: Անզիջուն պայքարը և հետևողական գործողությունները անպայման կտան իրենց արդյունքը:

Երրորդ փուլ.

2022 հունվարի 15-ից –

Ձեռք բերված փորձի հիման վրա ստեղծել քաղաքաբնակների կենցաղային անվտանգությունը ապահովող գործուն համակարգ: Կազմակերպել ծրագրին մասնակցող անհատ անձանց վճարման գործուն մեխանիզմ և ապահովել գործընթացի անընդհատությունը: Քաղաքի վարչական շրջաններում կազմակերպել ամենամյա մրցանակաբաշխություններ շենքի ամենագեղեցիկ ձևավորման, նորակառույց շենքերի ամենագեղեցիկ ֆասադի, ամենաանվտանգ ստորգետնյա/վերգետնյա անցումների ճարտարապետների/կառուցապատողների, ամենանվիրյալ քաղաքաբնակ և այլն անվանացանկերում:

4. Ծրագրի իրականացում

Քաղաքաբնակների կենցաղային և էսթետիկական անվտանգության ապահովման Ծրագիրը հավակնորդ ծրագիր է: Այն չափազանց բազմաբնույթ է՝ սկսվում է օրենսդրության արդիականացումից, շարունակվում է եղած բացասական երևույթների վերացմամբ, ներառում է հասարակության լայն շրջանակներում քարոզչական և աճող սերնդի դաստիարակչական աշխատանքը, ընթանում է բարելավելով քաղաքի կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառները:

Ծրագրի իրականացումը կատարվելու է քաղաքապետարանի կողմից և հիմնականում քաղաքապետարանի սպասարկման բաժինների աշխատակիցների ուժերով: Ծրագրի իրականացումը քաղաքապետարանի աշխատակիցների կողմից ավելի մեծ հնչողություն կտա ծրագրին և կաջակցի ***քաղաքաբնակ–քաղաքապետարան*** կապի ամրապնդմանը:

Նախկին թաղապետարանների գործելակերպը և մոտեցումները արծարծվող բնագավառում ցույց տվեց, որ առանձին տեղային ստորաբաժանումները կատարել նման առաջադրանքներ ի վիճակի չեն: Դրա պատճառները հիմնականում սուբյեկտիվ են՝ վարչական շրջանների աշխատակիցները, հիմնականում, հանդիսանում են նույն տարածքի բնակիչներ նրանց և բնակիչների միջև ստեղծվում են ոչ պաշտոնական հարաբերություններ ինչը խոչընդոտում է պատժողական գործունեության իրականացմանը: Կոռուպցիոն ռիսկերը այս դեպքերում շատ ավելի մեծ են: Նոր Ստեղծվող Ստորաբաժանման ենթակայությունը քաղաքապետարանին ավելի նպատակահարմար է: Եվ, որպեսզի, այս նախաձեռնությունն էլ չվերածվի քաղաքաբնակներից գումարների «հավաքագրման» ևս մեկ օղակի, իսկ ստեղծվող կազմակերպությունը չխուսափի իր վրա դրված պարտականությունների կատարումից նախատեսվում է ստեղծվող կազմակերպության գործունեության վերահսկումը անցկացնել երեք «հակադրված» մարմինների կողմից.

- **Հասարակական վերահսկում**
- **Քաղաքապետարանի վերահսկում**
- **Արտակարգ իրավիճակների նախարարության վերահսկում** (անցկացնում է ստեղծվող կազմակերպության կողմից կատարվող շինարարական աշխատանքների ինքնուրույն ուսումնասիրություններ՝ ինչպես աշխատանքների կատարման ընթացքում, այնպես էլ ավարտից հետո: Աշխատանքներում թերություններ, չարաշահումներ նկատելու դեպքում տեղեկացնում է ընդհուպ մինչև արդարադատության նախարարություն):

Փաստահավաք գործառույթները անցկացվելու են հետևյալ կերպ.

- առանձին քաղաքաբնակներ կամ քաղաքաբնակներից կազմված խումբ, ստեղծվող կազմակերպության աշխատակից, վարչական շրջանի աշխատակազմի աշխատակից, հրշեջ ծառայության մասնագետ, պարեկային ծառայության սպա, անհրաժեշտության դեպքում մշակույթի նախարարության աշխատակիցները Ստեղծվող Ստորաբաժանմանն են ներկայացնում իրենց կողմից նկատված թերությունները (լուսանկարների, կինոժապավենների, դիմումների տեսքով): Ներկայացված փաստերը ուսումնասիրվում են 12 (տասներկու) աշխատանքային օրվա ընթացքում: Ստեղծվող կազմակերպության մասնագետը մեկնում է և տեղում արձանագրում խախտման փաստը (լուսանկարների, կինոժապավենների, արձանագրությունների տեսքով): Էլեկտրոնային եղանակով փաստի առթիվ տեղեկացվում են քաղաքապետարանի և ԱԻ նախարարության համապատասխան բաժինները, անհրաժեշտության դեպքում Ճ/Ո:
- խախտումներով պատրաստված կառույցների ձևափոխման գործընթաց (մայթերի ապօրինի զավթում առևտրային կազմակերպությունների կողմից, մայթերին կառուցված ավտոտնակներ,

մայթերի ապօրինի զավթում շենքերի առաջի հարկի և մասնավոր տների բնակիչների կողմից, նկուղային հարկերի չպարսպապատված աստիճանավանդակ և այլն)[2]:

- ստորաբաժանման աշխատակիցը մեկնում է խախտում կատարած անձի մոտ և տեղեկացնում նրան կատարված խախտման վերաբերյալ: Ներկայացնում է որոշման հիմքերը և բացատրում ուղղման եղանակները: Խախտում կատարած քաղաքացուն տրվում է ծանուցում, որ թերությունը նրա կողմից 50 (հիսուն) օրացույցային օրվա ընթացքում պետք է վերացվի համաձայն ստեղծվող կազմակերպության կողմից ներկայացրած և հաստատված նախագծի: Խախտման վերացման համար նախատեսված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում գործը ուղարկվում է դատարան հայցվորից անհրաժեշտ գումար դատական կարգով գանձելու և թերությունը հայտարարված տենդերում (մրցույթում) հաղթած շինարարական կազմակերպության ուժերով վերացնելու համար:
- հասարակական վայրերում փակցված հայտարարությունների վերացում (կանգառներում, շքամուտքերում և այլն): Հայտարարություններում նշված համարներով կապվում են հայտարարություն փակցնողի հետ և առաջարկում նրանց մաքրել իրենց փակցված թերթիկները (հայտարարություններ փակցնելու համար քաղաքապետարանի կողմից կան նախատեսված վահանակներ): Փակցված հայտարարությունների վերացման համար տրամադրել 10 (տաս) օրացուցային օր: Մաքրելու կոչին չարձագանքողները միանվագ տուգանվում են 30'000 (երեսուն հազար) դրամ[3]: Դրանից հետո քաղաքապետարանի սպասարկման բաժնի աշխատակիցների ուժերով հիմնովին մաքրել շենքերի պատերը, լուսաֆորները, անձրևային ջրերի հեռացման խողովակները, շքամուտքերի դռները և պատերը և այլն (մաքրմանը մասնակցած աշխատակիցներին վճարվում է հավելավճար հավաքված միանվագ երեսուն հազար դրամ տուգանքներից): Նոր փակցված հայտարարությունների համար կիրառվելու են տուգանքներ ըստ նոր ընդունված սանդղակի և այլ պատժիչ միջոցներ:

- քաղաքապետարանի երկու տարբեր բաժինների աշխատակիցներից, ոչ այդ տարածքից ընտրված ավագանու մեկ անդամից և համապատասխան ուղղվածություն ունեցող որևէ երկու հասարակական կազմակերպության մեկական անդամից կազմված խումբը ստուգում է կատարված աշխատանքները, կազմում արձանագրություն և ներկայացնում քաղաքապետարան և պարեկային ծառայություն:

Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է, որ այն գտնվի քաղաքային իշխանությունների և ԱԻ նախարարության մշտական վերահսկման և հովանավորության ներքո[ii]:

Ծրագրի իրագործումը ենթադրում է՝

- իրենց քաղաքի բարեկեցիկ ապագայով շահագրգռված քաղաքաբնակների լայն շրջանակների մասնակցություն: Ցանկալի է քաղաքի բոլոր վարչական շրջաններում ստեղծել աջակիցների խմբեր (վճարովի հիմունքներով), ովքեր կհետևեն քաղաքի կենցաղային անվտանգության նորմերի կատարմանը ու պահպանմանը և կտեղեկացնեն քաղաքաբնակների կենցաղային և էսթետիկական անվտանգությունը ապահովող մարմնին կատարվող խախտումների մասին:

[2] Հասկանալի պատճառներով Երևանի բնակֆոնդի առաջին հարկերը հիմնականում համապատասխանեցված չեն առևտրային գործունեություն ծավալելու համար և գործարարները փորձել են համապատասխանեցնել տարածքները առևտրային գործունեության պահանջներին: Սակայն 1995-2017 թթ. կատարված հասարակական տարածքների զավթումները, մայթերի ապօրինի գրավումը բնակելի տարածքների տակ և որպես առևտրային տարածքներ օգտագործելը ոչ մի կերպ չի արդարացվում: Ճարտարապետական լուծումներից զուրկ, հասարակական ունեցվածքի բիրտ զավթումների կողքին կարելի նկատել նաև մայթերի օգտագործման ճիշտ ճարտարապետական լուծումներ: Այսինքն, հարցը անհուսալի չէ:

[3] Երեսուն հազար դրամ տուգանք կիրառելու միջոցառման սկզբի և ավարտի ժամկետները ենթակա են ճշտման:

- սերտ համագործակցություն ճանապարհային[4] և պարեկային ոստիկանության ստորաբաժանումների հետ:
    - Քաղաքային, հասարակական ունեցվածքի պահպանումը չափազանց վատ էր կազմակերպված նախկին իշխանությունների կողմից: Ոչնչացվում էին հասարակական արժեք ներկայացնող առարկաներ՝ գրանիտե և մարմարե երեսպատման սալիկները գողացվում էին օրը ցերեկով և ոչ ոք չէր համարձակվում գողերի ձեռքը բռնել: Գողացվածի փոխարեն, լավագույն դեպքում, լցվում է անշուք բետոն; գողացվում կամ ջարդվում էին կանգառների կառույցները; հասարակական վայրերում փակցվում են մասնավոր զանազան նշանակության թերթիկներ և այլն[5]:
    - Պարեկային հսկողություն կատարող ոստիկանները երեկոյան և գիշերային ժամերին չեն ստուգում գետնանցումները, բակերը: Այդ ժամերին մեծ թվով անցումներ, որտեղ կան խանութներ, փողոցի մուտքերի կողմից փակվում են երկաթե դարպասներով անհնարին դարձնելով հետիոտնի գետնանցումով փողոցը անցնելը, դրանով իսկ վտանգելով նրա կյանքը գիշերվա երթևեկության պայմաններում:
    - Բացի այն, որ ցերեկվա ժամերին քաղաքում գրեթե չեն գործում հասարակական զուգարաններ, երեկոյան ժամերին եղածներն էլ են փակվում. դրանով իսկ խախտվում են բազմաթիվ հետիոտների, ոստիկանների, տաքսու վարորդների և այլնի աշխատանքային և սանիտարական պայմանները:
    - Լուսաֆորները ճիշտ չեն ծրագրավորված՝ հնարավոր չէ անվտանգ անցնել փողոցը ողջ լայնքով[6]: Լուսաֆորները հաշվարկված չեն երթևեկության օրվա ընթացքում փոփոխությունների հետ: Ճանապարհային ոստիկանության անձնակազմի մեծամասնությունը ենթակա է փոփոխման՝ նրանք ի վիճակի չեն քաղաքացիների հետ քաղաքավարի շփմանը:

Ծրագրի իրականացումը նպատակահարմար է բաժանել երեք հիմնական փուլի՝ յուրաքանչյուրը իր ենթափուլերով:

Փուլերի բաժանումը կնպաստի նախատեսված միջոցառումները հստակ և ամբողջովին իրականացնելուն: Բացի այդ, Ծրագրի իրագործման ընթացքում ի հայտ կգան նոր իրողություններ, չնախատեսված հանգամանքներ, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն, խնդիրների լուծման նոր եղանակներ, տեխնիկական նորամուծություններ, որոնք հնարավոր չէ նախատեսել Ծրագրի կազմման պահին և որոնց առկայության դեպքում շատ խնդիրներ կստանան նորովի լուծումներ:

[4] Ճանապարհային ոստիկանությունում կատարվող բարեփոխումների մասին և «ՀՀ և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագիրը» ՀՀ կառավարության կողմից ընդունելուց հետո ճ/ո գործողություններում որոշ փոփոխություններ նկատվում են, սակայն դրանք կրում են մակերեսային բնույթ:

[5] Սույն Ծրագիրը փոփոխվում է պատրաստման ընթացքում քանզի անժխտելի է նոր քաղաքային իշխանությունների ներդրումը, բազմաթիվ խնդիրներ ստանում են իրենց լուծումը: Սակայն, օրինակ հասարակական տրանսպորտի կանգառների վերանորոգումից հետո որոշ ժամանակ պահպանվող նրանց մաքրությունը արդեն իսկ սկսել են աղտոտել:

[6] Այժմ իրականացվում են լաուսաֆորների ծրագրավորման հստակեցումներ, սակայն դեռ իդեալից հեռու են:

4.1. Առաջին փուլ.

Ընդհանուր առմամբ կրելու է ծանոթության, ուսումնասիրության և փաստահավաք բնույթ:

1. Գործող, սակայն ժամանակակից իրականությանը չհամապատասխանող օրենսդրական և նորմատիվ բազաների թարմացում:

   a. Իրականությանը չհամապատասխանող, ժամանակակից դրսևորումները չընդգրկող, շինարարական, տեխնիկական զարգացման գործընթացներին զուգահեռ չթարմացվող օրենքների դրույթները և նորմատիվ ակտերի պահանջները խոչընդոտում են քաղաքաշինության և քաղաքի համահունչ առաջընթացին:

   b. Առանձնահատուկ ուշադրություն է հարկավոր դարձնել գանձվող վարչական տույժ և տուգանքների չափերի և տուգանքի հիմք հանդիսացող դեպքերի դասակարգմանը: Այս հարցում օգտակար կլինի ուսումնասիրել Գերմանիայի և Սինգապուրի ձեռքբերումները, որպես աշխարհում ամենահայտնի և արդյունավետ օրինակներ: Տուգանքների չափերը միևնույն խախտման համար պետք է լինեն նույնը, առանց որևէ լագերի (մարդկային գործոնից՝ կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար):

   c. Տուգանքների կարգավորման հետ մեկ տեղ մեծ ուշադրություն պետք է դարձվի հասարակությանը նոր օրենքներին և նորմերին ծանոթացնելու, բացատրելու գործունեությանը՝ ՋԼՄ-ների, Հասարակական Կազմակերպությունների և բակային հանդիպումների միջոցով:

   d. Հարկավոր է իսպառ վերացնել անպատժելիության մթնոլորտը: Մեր քաղաքացիների մոտ վերջի տարիների ընթացքում ձևավորվել է **«անպատժելիության կանխավարկած» («презумпция безнаказанности»)**[iii]: Ընդ որում՝ անպատիժ են իրենց զգում բոլորը՝ և օրինապահ մարմինների աշխատակիցները անօրինական գործողություններ կատարելիս, և փողոցում կանգառի ապակիները կամ տաքսաֆոնի ապակիները ջարդող «անձը», աղբը պատուհանից դուրս շպրտող և աղբամանի կողքը թափող «մարդը», և երթուղայինի, և մասնավոր մեքենայի և պետական պաշտոնյայի վարորդները և այլն:

      i. Ճանապարհային երթևեկության կանոնները խախտում են և թանկարժեք մեքենաների և երթուղային տաքսիների վարորդները: Ուղղակի հասարակության ուշադրության կիզակետում են գտնվում միայն թանկարժեք մեքենաների վարորդները: Երթուղային տաքսիների երթևեկությունը կարգավորելուց հետո թանկարժեք մեքենաների վարորդների կողմից կատարվող խախտումների թիվը կտրուկ կնվազի, նաև այն պատճառով, որ շատ դեպքերում կարիք չի լինի խախտում կատարել: Հարկավոր է Ճանապարհային ոստիկանության հետ համատեղ որոշում ընդունել Երևանի պողոտաներում մեքենաների երթևեկության թույլատրելի առավելագույն արագության բարձրացման վերաբերյալ: Այս քայլը ևս պայմանավորված է ժամանակակից մեքենաների տեխնիկական բնութագրերի փոփոխման հետ[7]:

   e. Ստեղծել բոլոր անհրաժեշտ իրավական և իրավաբանական հիմքերը ապօրինի կառույցների ապամոնտաժի, մայթերի զավթված հատվածների վերականգման և այլ նմանատիպ խախտումների վերականգնման աշխատանքները խախտումը կատարողի հաշվին իրականացնելու համար:

---

[7] «ՀՀ և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագրով» նախատեսվում է ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի ստեղծում ՀՀ վարչապետի նախագահությամբ: Թե ինչ առընչություն ունի ՀՀ վարչապետը ճանապարհային երթևեկության կանոնների մշակման հետ անհասկանալի է: Ինչպես նաև անհասկանալի է Համաշխարհային Բանկից կառույցի զարգացման նպատակով վարկի ստացումը: Ճ/ո-ը այն կառույցն է, որ ի վիճակի է գումար աշխատել ինքնուրույն և պարտքային բեռի ավելացումը բացարձակապես հիմնավորված չէ: Ակնհայտ անհրաժեշտ չէ տարվել "բարեկեցման մոլուցքով" և պարզ լուծելի խնդիրները բարդացնել միայն դրանց հնչողություն տալու համար:

f. **Գույքահարկի մասին ՀՀ օրենքում** լրացումներ և փոփոխություններ կատարելու նախաձեռնում: Սկսել գույքահարկի բարձրացման վերաբերյալ քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Ձեռնարկել բացատրական միջոցառումների լայնածավալ համալիր հասարակության լայն զանգվածների համար: Օրենքի նոր դրույթների մոնիտորինգ:

   i. Կրպակների և ավտոտնակների վերացման, շենքերի տանիքների ներկայիս անմխիթար վիճակը փոխելու գործնական միակ տարբերակն է գույքահարկի բարձրացումը: Ներկայիս գործող գույքահարկի չափը չափազանց ցածր է: Գույքահարկի ցածր լինելը ստեղծում է չափազանց շատ բարդույթներ՝ ֆինանսա–նյութական միջոցների քրոնիկ սակավության պատճառով կառույցներում տեղի ունեցած փոքր անսարքությունները ժամանակին չեն վերանորոգվում վերածվելով լուրջ անսարքությունների հետագայում; տանիքները վերանորոգվում են հին տեսակի շինանյութերով (եթե բնակիչը ինքը իր հաշվին չի կատարում վերանորոգումը, ինչը ոչ բոլոր բնակիչներն են կարող իրենց թույլ տալ): Վերանորոգումը կատարվում է անփույթ, ինչը ստեղծում է վտանգ անցորդների համար քամու դեպքում և գարնանային ձնհալի ժամանակ:

   ii. Եվ, ի վերջո, չի կարող մեկ քմ 1’200-2’500 դոլար արժեցող Երևանի կենտրոնում գտնվող բնակարանի համար **տարեկան** կտրվածքով վճարվել 0.1-0.3 ԱՄՆ դոլար գույքահարկ[8]:

2. Մասնավոր անձանց կողմից բնակելի և հասարակական նշանակություն ունեցող շենքերի պատերին, շքամուտքերի դռներին, վերելակների դռներին (հին տեսակի վերելակների խցիկում մի պահ փակցվում էր գովազդային վահանակ՝ գեղեցիկ է և տեղեկատվական), մուտքի պատերին, լուսասյուներին, հասարակական տրանսպորտի կանգառների շինությունների պատերին (ընթացքում է կանգառների վերանորոգման աշխատանքները և, ինչպես մեկ տարի առաջ փակցվում են հայտարարություններ փակցնել արգելող զգուշացումներ), ծառերին և այլ հասարակական վայրերում հայտարարությունների փակցնելու արգելում և տուգանքի սահմանում:

   a. Հարկավոր է սահմանել տուգանքի մի որևէ չափ A4 կամ Letter ձևաչափերի համար, իսկ դրանցից մեծ կամ փոքր մակերեսով փակցված հայտարարությունների համար կիրառել բազմապատկման գործակից. (բացատրություն. կանխատեսելով ստեղծված իրավիճակից օգուտ քաղելու ոմանց հնարամտությունը հարկավոր է բացառել այն դեպքերը, երբ մեծ մակերեսով գովազդային պաստառ կամ հայտարարություն փակցնելով քաղաքի կենտրոնական փողոցներում փակցնողները կարող են հասնել իրենց հետապնդած արդյունքին (ԶԼՄ-ներում մեկնաբանում, արձագանք հասարակության շրջաններում): Տուգանքի մեծ չափը զերծ կպահի նման գովազդային ակցիա ձեռնարկողներին:

   b. Մասնավոր հայտարարությունների վերացման ընթացքում կարող ենք ականատես դառնալ հետևյալ փաստի՝ մրցակիցներին, թշնամիներին և ուղղակի վատություն կամ «հումոր» անելու համար որոշ «հնարամիտներ» կարող են ուրիշների տվյալներով հայտարարություններ փակցնել զանազան հասարակական վայրերում ակնկալելով հայտարարություններում նշված անձանց նկատմամբ տուգանքներ և «քաշքշուկներ»: Նման «հնարամտություններից» խուսափելու համար հարկավոր է կամ անմիջապես տեղում ոստիկանների կողմից խափանվի փակցնելու փաստը հետագա ոստիկանական

[8] Եվրոպական և մեր ապրելաոճին բնորոշ է քաղաքի կենտրոնում ապահովված բնակիչների կենտրանցում՝ ի տարբերություն Հյուսիսային Ամերիկայի պետությունների: Ցանկացած բանական անձ հասկանում է, որ քաղաքի կենտրոնում պետք է բնակվեն ապահովված, կայացած, հաջողակ անձինք: Անհիմն են մեջբերումները, թե քաղաքի կենտրոնից դուրս են մղվում մտավորականները: Ինչպես այժմ, նախկինում էլ քաղաքի կենտրոնում բնակվել են կայացած անձիք՝ կուսակցական պաշտոնյաներ, զանազան դասախոսներ, գիտնականներ, արվեստի ներկայացուցիչներ: Սակայն ներկայում քաղաքի կենտրոնում բնակվող շատերի անվճարունակության պատճառով առանց տարիների վերանորոգման քայքայվում են կենտրոնի հին շենքերը, կառուցվում են կցոններ, այլանդակվումեն գեղեցիկ պատշգամբները: Կենտրոնում գույքահարկը պետք է անհամեմատ ավելի բարձր լինի անվճարունակ բնակիչներից կենտրոնը ազատելու համար:

քննությամբ, կամ ականատես պարտաճանաչ քաղաքաբնակի կողմից փակցնելու փաստը արձանագրվի ֆոտոխցիկով և ներկայացվի ստեղծվող կազմակերպություն: Վարչական խախտման տուգանքի 30-50% վճարվելու է խախտումը արձանագրողին: Փակցնելու փաստը չարձանագրելու դեպքում պետք է անցկացվեն վարչական քննություն՝ արդյոք հայտարարությունում նշված անձն է փակցրել հայտարարությունը և ներկայացնում է այն ուրիշի ձեռքի գործը, թե տեղի է ունեցել անձի զրպարտանք կամ վարկաբեկում (подстава):

3. Քաղաքի բոլոր հատվածներում եղած մայթերի չափագրում, նորերի նախագծում, կառույցների տակ զավթած մայթերի վերականգնում նախնական գծագրային չափսերում: Այն հատվածներում, որտեղ մայթերը ապօրինի զավթել են շինությունների տակ կատարել մայթերի վերականգնում ոչ թե կառուցելով նոր մայթեր երթևեկելի հատվածի հաշվին, նեղացնելով դրանք, այլ վերականգնել եղածները քանդելով կառույցները: Տեղեկացնել ապօրինի շինություններ կառուցողներին, որ ֆինանսական ծախսերը կատարվելու են ապօրինի շինության սեփականատիրոջ հաշվին (անկախ նրանից թե խախտումը կատարել է նախկին սեփականատերը):

4. Ավտոտնակների (գարաժների) նոր հաշվառում և չափագրում: Ավտոտնակների չափման հիմք ընդունել արտաքին եզրագծերը: Երկու ավտոտնակների միջև ընկած, այլևս ոչ պիտանի և ավտոտնակների սեփականատերերի կողմից չօգտագործվող տարածքները հաշվառվում են կից ավտոտնակների սեփականատերերի հաշվին կիսելով հավասարաչափ երկուսի միջև (եթե այլ պայմանավորվածություն ավտոտնակների սեփականատերերի միջև չի ձեռքբերվում): Գույքահարկը գանձվում է նաև այդ տարածքի համար[9]:

[9] Մանրամասն ավտոտնակների հետ կապված տեղեկատվություն տես գլուխ 6, կետ 1.c ենթակետ:

4.2.Երկրորդ փուլ.

Երկրորդ փուլը ամենածավալուն է ինչպես տևողությամբ, այնպես էլ նախատեսված խնդիրների բարդությամբ: Չի կարող հաջողությամբ իրագործվել ոչ մի ծրագիր, եթե չի վայելում հասարակության լայն զանգվածների աջակցությունը: Առաջնորդվելով հանրաճանաչ այս իմաստությամբ Ծրագրում մեծ տեղ է հատկացվում քաղաքաբնակների հետ համագործակցությանը: Քարոզչական աշխատանքների շնորհիվ պետք է արթնացնել քաղաքաբնակների մոտ քաղաքի նկատմամբ «տիրոջ» զգացումը, «տիրոջ» վարվելակերպը: Երևանցին պետք է համոզված լինի, որ փողոցում բռնելով "վնասատուի" ձեռքը նա մենակ չի մնալու, նրան անմիջապես օգնելու են կողքի անցորդները: Եվ իր անձնանվեր արարքը գովաբանվելու է հասարակության կողմից: Անցյալում են մնալու վատը հերոսացնելու պարզունակ սովորույթները: Հասարակության հետ ԶԼՄ-ների միջոցով և անմիջական հանդիպումների ընթացքում Ծրագրի նպատակների լայնածավալ ներկայացմամբ, բացատրությամբ, ձևավորվելու է նոր հասարակական աշխարհայացք:

Ծրագրի առաջընթացը անհնարին է առանց հասարակության բարոյական առողջացման: Բարոյական առողջացման նախադրյալներից է նաև քաղաքաբնակների և քաղաքապետարանի միջև հավասար, միմյանց իրավունքները և աշխատանքը հարգող փոխհարաբերությունների հաստատումը:

- ✓ *Քաղաքապետարան–քաղաքաբնակ.* քաղաքապետարանը ԶԼՄ-ների միջոցով տեղեկացնում է հասարակության լայն շրջանակներին կենցաղային անվտանգության բարելավման ուղղությամբ նախատեսվող և տարվող աշխատանքների մասին: ԶԼՄ-ների լայնածավալ օգտագործումը հնարավորություն է ընձեռում պահել հասարակության մշտական ուշադրության ներքո ինչպես իրականացվող աշխատանքների ընթացքը, այնպես էլ հասարակության լայն շրջանակներում ձևավորում է անհանդուրժողական մթնոլորտ քաղաքի տնտեսությանը վնաս պատճառողների նկատմամբ, ինչը իր հերթին հեշտացնում է Ծրագրի առաջխաղացումը և նվազեցնում է առանձին ազդեցիկ "վնասատուների" Ծրագրի նպատակներին հակազդելու հնարավորությունները:
- ✓ *Քաղաքաբնակ–էթիկա, (բարոյական նորմեր).* Վերջին երեք տասնամյակի ընթացքում տեղի ունեցավ մեծաթիվ հայաստանաբնակների բարոյազրկում (բարոյական պատկերի վերացում): Հասարակության որոշ խավի մոտ 50-80-ական թթ. ձևավորված բարոյական պատկերը չկարողացավ դիմակայել անցումային տարիների դժվարություններին՝ կարելի է ենթադրել, որ այդ բարոյականության հիմքերը անկայուն էին, իսկ որոշ դեպքերում այն փուչիկ էր:

  Այժմ պետք է ընդունել, որ որպես քաղաքաբնակ որակական արժեք մարդկանց մոտ բացակայում է բարոյական արժեքների համակարգը: Ուրեմն հարկավոր է ստեղծել նոր, ինքնահարգանք ունեցող ՔԱՂԱՔԱԲՆԱԿ: Կարևորը ընդունել, որ այն ինչ կա վատ է, ունենալ լավի տեսլականը և հետևողական գնալ դեպի նպատակ:

  Ոմանց զուտ էթիկայի և ինքնահարգանքի զգացումի պակասի մասին են վկայում հասարակական մայթերի զավթումը, ավտոտնակների կառուցումը երեխաների խաղահրապարակներ նախատեսված վայրում, երեք հատ 50 տարեկան ծառի կտրելը մեկ ավտոտնակ կառուցելու համար, իրենց իսկ շքամուտքերում կեղտոտելը, հասարակական վայրերի աղտոտումը և այլն:

  Էթիկայի նորմերը մշակվում են բնակչության վերնախավի կողմից: Բնական է, որ ժամանակի հետ համահունչ փոխվում են նաև էթիկայի նորմերը՝ այն, ինչը անընդունելի էր երեկ սովորական երևույթ է այսօր և հակառակը: Իսկ վերնախավ միշտ դառնում են նոր՝ հետևաբար առաջադեմ գաղափարախոսություն և լուծումներ առաջարկող անձիք:

- ✓ *Էթիկա – բարեկեցություն.* բարեկեցությունը շատ ավելի ընդգրկուն հասկացություն է քան ընդունված է մեզ մոտ հասկանալ: Այն իր մեջ ներառում է անձի դեպքում՝

- ազատության և իրավունքների պաշտպանությունը, իսկ անձի կողմից պարտակա-նությունների կատարումը,
- վստահությունը ապագայի նկատմամբ,
- անվտանգությունը՝ քրեական, կենցաղային և հոգևոր,
- ներդաշնակությունը շրջակա միջավայրի, բնակավայրի սոցիումի՝ հարևանների միջավայրի հետ:

քաղաքի դեպքում՝ ***բարեկեցիկ քաղաք*** ասելիս ցանկացածի մոտ առաջանում է հետևյալ շառավղում մի պատկեր՝ գոնե քաղաքի կենտրոնի առումով.

Նկար 2

Փողոցներ	Մայթեր	• Մաքուր • Խնամված • Կանաչապատ • Հարմարավետ • Գրավիչ • Զերծ սուր և վտանգավոր առարկաներից • Գեղեցիկ • Չխանգարող սրճարաններով	• Անվտանգ երթևեկություն • Ստորգետնյա և վերգետնյա հետիոտնի անցումներ
	Երթևեկելի մաս	• Անաղմուկ և մթնոլորտը չաղտոտող մեքենաներ • Տեղին և ճիշտ կառուցված ճանապարհային հանգույցներ • Ստորգետնյա կայանատեղ • Տեղին տեղադրված և սպառիչ տեղեկատվություն ապահովող ճանապարհային նշաններ	
Շենքեր	Փողոցի կողմից	• Քանդակներով և նախշերով գեղեցիկ ձևավորված ֆասադներ • գեղեցիկ շքամուտքեր • Անվտանգ, վերանորոգված կախովի պատշգամբներ • Ավտոկայանատեղեր	• Շենքերի տակով անվտանգ քայլելու հնարավորություն (բնակիչները ուտելիքի մնացորդները դուրս չեն նետում, տանիքները վերանորոգված են) • Պահպանման համակարգով մուտքեր
	Բակի կողմից	• Մաքուր և գեղեցիկ մուտքեր • Ճարտարապետական ընդհանուր լուծման մետ ներդաշնակ շենքերի բակային ֆասադների ձևավորում • Գույնզգույն ծածանվող լվացքների բացակայում	
Բակեր		• Անաղմուկ • Կանաչապատ • Հարմարավետ խաղահրապարակներ • Երեխաների անվտանգություն • Ստորգետնյա ավտոկայանատեղեր • Ոչ մի պատկերացման սահմանում չի «ժավելի սպիրտ» զիլ ձայնով բղավող տատիկը	

Երկրորդ փուլի ընթացքում իրականացվելու են առաջի փուլի ընթացքում բացահայտված և արձանագրված նախագծային չափերից ապօրինաբար շեղումներով կառուցված կամ ձևափոխված

շինությունների նախագծային չափերի հետ համապատասխանեցնելու վերականգնողական աշխատանքները: Առաջի գործնական քայլերն են.

1. Քաղ. Երևանի երկրորդական փողոցների մայթերի վերականգնման աշխատանքների սկիզբ: Ապօրինի շինությունների սեփականատերերի «բազմաթիվ բանակում» ավելորդ լարվածություն չստեղծելու համար նպատակահարմար է մայթերի վերականգնման աշխատանքները իրականացնել տարածք առ տարածք (շինարարական աշխատանքները հնարավորինս արագ, համախմբված, ամբողջովին և վերջնական իրականացնելու համար: Աշխատանքների համալիր և արագ ավարտելը հասարակության լայն շրջանում գործընթացի վերաբերյալ խիստ դրական տրամադրվածություն կձևավորի):
2. ՀՀ գույքահարկի մասին օրենքում լրացումների և փոփոխությունների փաթեթի ներկայացում ՀՀ ԱԺ:
3. Նախկին կրպակներից մնացած հիմքերի, տեղափոխված կանգառների հիմքերի ու գետնից ցցված երկաթների և նմանատիպ, նախկինում թույլ տրված զանազան անփութությունների վերացում քաղաքապետարանի միջոցների հաշվին:

Հարկավոր է հստակ տարանջատել քաղաքապետարանի և բնակիչների միջոցներով կատարվող վերանորոգման աշխատանքները: Ի՞նչու պետք է կարգապահ բնակիչները տուժեն ոչ կարգապահ հարևանների պատճառով: Ի՞նչու պետք է քաղաքապետարանը մշտապես միջոցներ հատկացնի՝ օրինակ՝ միևնույն մուտքում անընդմեջ վերանորոգում անցկացնելու համար, այն դեպքում, երբ կողքի մուտքի բնակիչները բարեխիղճ են և չեն վնասում կամ թույլ չեն տալիս վնասելու իրենց շքամուտքը: Չե որ միջոցները կարող էին ուղղվել ընդհանուր բակի բարելավմանը: Քաղաքային իշխանությունների առջև տվյալ հարցը միշտ ծառանալու է: Նման խնդիրները այնքան ժամանակ են հանդիսանալու բնակիչների միջև տարաձայնությունների աղբյուր, քանի դեռ հասարակության մեջ չի ձևավորվել անձնական պատասխանատվության ինստիտուտը՝ հարևանները պետք է մատնանշեն «վնասատուին» չվախենալով վերածվելու **«մատնիչի»** ու հաշվեհարդարից, լինեն վստահ օրինապահ մարմինների անմիջական միջամտմանը:

Զարամիտ (դիտավորյալ) վնասատուներին պատասխանատվության կանչելու տարբերակներից մեկն է բարեխիղճ քաղաքացիների շահագրգռվածությունը հասարակական ունեցվածքի պահպանման նկատմամբ բարձրացնելը: Դրան կարելի է հասնել բնակիչների անձնական լուման ներգրավելով հասարակական ունեցվածքը պահպանելուն: Դրա համար քաղաքի մասշտաբով կազմակերպվում է միջոցառում՝ **«Անձամբ Դու ինչե՞ս արել Քո Քաղաքի համար»** խորագրով, որը լայնածավալ մեկնաբանվում է ՁԼՄ-ում: Միջոցառման ընթացքում համատիրությունը կամ վարչական շրջանի աշխատակիցները[10] կազմակերպում են բնակիչների ժողով, որտեղ ամեն մի բնակիչ կամովի և համաձայնեցնելով այլ բնակիչների հետ ստանձնում է գործողություն մատնանշելով թե անձամբ ՆԱ ինչ աշխատանք է կատարում իրենց շքամուտքում/բակում (ոչ մեծ ծավալի, որ յուրաքանչյուրին իր ուժերի սահմաններում հասանելի լինի) և ինչպես է յուրաքանչյուրը հսկում իր կատարածի պահպանումը: Քաղաքապետարանի վարչական շրջանների աշխատակիցների կողմից լուսանկարվում են միջոցառման մասնակիցները և աշխատանքի արդյունքները և փակցվում մուտքերում և վերելակներում արդեն իսկ գեղեցիկ տեղադրված գովազդային ցուցափեղկերում: Միջոցառումը պետք է ձեռնարկվի հաջորդաբար տարբեր բակերում, որպեսզի բնակչությունը կարողանա տեսնել այլ վայրերում արդեն կատարվածի արդյունքները և գնահատի կարևորությունը:

[10] Նախկինում թաղատետարաններ (վարչական շրջաններ) աշխատանքի են «տեղավորվել» բազմաթիվ անձինք, ում ներկայությունը այդ կառույցներում հուսադրող չէ: Նման «աշխատակիցներից» հարկավոր է շուտափույտ ձերբազատվել: Քաղաքի խնդիրները հիմնականում վարչական շրջանների միջին օղակի թերիության արդյունքն են՝ նրանց զբաղեցրած հաստիկներին բացարձակապես չհամապատասխանելու հետևանք:

4.3. Երրորդ փուլ.

Երրորդ փուլը գոյություն ունեցած խախտումների վերացման ավարտական փուլն է: Հասկանալի է, որ վերացնել բոլոր խախտումները հնարավոր չէ և, այդ իսկ պատճառով հստակ սահմանել Երրորդ փուլի տևողությունը անհնար է:

Երրորդ փուլի առաքելությունն է՝ ստեղծել այն մթնոլորտը, օրինականության պայմանները և օրենսդրական դաշտը, որոնք հետագայում կբացառեն կառուցապատման ոլորտում հասարակական ունեցվածքի նկատմամբ ցանկացած ոտնձգություն որևէ մեկի կողմից:

Իրենց առօրյայում արդեն կենցաղային անվտանգության բոլոր դրական կողմերը ճաշակած քաղաքաբնակները կհանդիսանան Ծրագրի շարունակականության ջատագովները: Հստակ ձևակերպված օրենքները և նորմերը, պարգևատրումների և տուգանքների չափսերը և գանձման մեխանիզմները քաղաքաբնակներին զերծ կպահեն պետական ծառայողների հետ հաճախակի պարզաբանումներ անցկացնելուց: ***Քաղաքաբնակ-պետծառայող շփման նվազեցումը կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ամենագործուն մեխանիզմն է:***

Կենցաղային անվտանգությանը ներկայացվող պահանջները հասարակության և տեխնիկայի զարգացման հետ մեկտեղ բարձրանալու են. փայտե բռնակների փոխարեն կպահանջվեն պլաստմասե, կարբոնե, նույնը վերաբերում է նստարաններին (էկոլոգիապես մաքուր և անվնաս) և այլն: Հարկավոր է քաղաքապետարանի անունից մրցույթ հայտարարել մասնագիտացված համալսարանների հետազոտական լաբորատորիաներին մշակելու քաղաքի տնտեսությանը անհրաժեշտ նյութերը և կազմակերպել դրանց արտադրությունը Հայաստանում:

Բարձրանում են նաև բնակչության պահանջները ***էսթետիկական անվտանգության*** նկատմամբ: Երևանի մետրոպոլիտենի կայարաններին կից տարածքները վերածվել են շուկաների՝ մասնավորապես Բարեկամություն և Գարեգին Նժդեհ կայարանները: Այդ երկու կայարանները ամենամարդաշատն են: **Վթար պատահելու դեպքում այդ կայարաններում, մարդկանց հոսքը տեղ չի ունենա մղվելու:** Զանազան կրպակներ, ծաղկի տաղավարներ փակում են մետրոյից անմիջական ելքերը: Խոչընդոտ հանդիսացող կրպակների և այլ անփույթ, անվտանգության տարրական նորմերի խախտումով տեղադրված սուր ծայրերով առարկաների վերացումը հարկավոր է կատարել հիմա, չսպասելով դժբախտ պատահարի: Մետրոպոլիտենի կայարաններին կից անցումների անմխիթար վիճակը բազմաթիվ ուղևորների վանում է մետրոպոլիտենից օգտվելուց հասցնելով անմիջական նյութական վնաս մետրոպոլիտենին: Բացի այդ շատ քաղաքաբնակներ խուսափում են ստորգետնյա անցումներից օգտվելուց դրանցում տիրող հակասանիտարական վիճակից և առևտրային անցուդարձից: Այդ մարդիկ ստիպված իրենց կյանքը վտանգի են ենթարկում անցնելով փողոցը արգելված տեղերով, նյարդայնացնելով վարորդներին և ստեղծելով վթարային իրավիճակներ *(օրինակ՝ մետրո Բարեկամության կայարանի հատվածում Հ.Քոչար փող. սկզբնամաս)*: Ինչպես տեսնում ենք մեկ սխալը իր ետևից այլ բացասական երևույթներ է առաջացնում:

Ծրագրի տևողությունը և հաջողությունը կապված է հստակ ձևակերպված օրենքներից և նորմերից: Քաղաքի տնտեսությանը վնասող խախտումների համար տուգանքների և դրանց հայտնաբերողներին նախատեսված պարգևատրումների սանդղակի որոշումը պետք է թողնել քաղաքի իշխանությունների հաստատմանը: Քաղաքի իշխանությունները ավելի օպերատիվ կկառավարեն իրենց տնտեսությունը: Տուգանքների և պարգևատրումների ինդեքսացիան ավելի ճկուն կանցկացվի կապված սղաճի և տարադրամի փոխարժեքի տատանման հետ:

Քաղաքում կենցաղային անվտանգության ապահովողները առաջի հերթին պետք է լինեն իրենք քաղաքաբնակները: Քաղաքաբնակներին քաղաքի կյանքին ավելի ակտիվ մասնակից դարձնելու համար պարտադիր պետք է ուսումնասիրվի արտասահմանյան քաղաքների փորձը: Օրինապահ և նվիրված ՔԱՂԱՔԱՑՈՒ դաստիարակումը պետք է դառնա ազգային ծրագիր՝ պետք է ձևավորի անձի սեփական, դիմացինի կյանքի, երկրի, բնության, հասարակական ունեցվածքի նկատմամբ հարգալից և սրտացավ վերաբերմունք: Դրան սովորում են նաև տեսնելով և ընդօրինակելով:

Բնական երևույթ է լինչելու Ծրագրի իրագործումը սկսելուց որոշ ժամանակ հետո քաղաքաբնակների հետաքրքրության անկումը Ծրագրի նկատմամբ: Սակայն, հետաքրքրության առավել անկում նկատվում է անհետևողական ծրագրերի և գործողությունների նկատմամբ: Ճիշտ և հետևողական կազմակերպված ծրագրերը ունենում են մեծ հաջողություն, իսկ իրենց հետևորդների քանակը ավելանում է: Աշխատանքներից ամեն մի փուլը պետք է հասցվի իր տրամաբանական և գործնական ավարտին: Չպետք է մնան «կիսատ-պռատ» կատարված աշխատանքներ՝ չհավաքված շինաղբ, կիսատ մաքրված պատեր և այլն[11]:

Նաև անընդհատ ուշադրություն է պահանջում հասարակական տրանսպորտի բնագավառը: Բնագավառում իրականացվող բարելավումները ակնհայտ են՝ նոր ավտոբուսներ, ընդ որում ըստ երթուղու ծանրաբեռնվածության հատկացված են համապատասխան մարդատարության մեքենաներ; ավտոբուսների աշխատանքային ժամերը երկարացվում են; մետրոյի և վերգետնյա տրանսպորտի կանգառների վերանորոգում և այլն: Սակայն հասկանալի է, որ լիովին հրաժարվել միկրոավտոբուսների օգտագործումից հնարավոր չէ: Առաջ է գալիս միկրոավտոբուսների շահագործման նորմերի ընդունման հարցը: Երթուղային տաքսիների վարորդները մեքենան վարելու ընթացքում ուղևորից ստանում են գումարը, վերադարձնում մնացորդը, այդ պահին վարելով մեքենան մեկ ձեռքով: Երթուղային տաքսիների մեջ տեղադրված են մեքենա ելումուտը դժվարացնող լրացուցիչ նստարաններ: Նստատեղերը ավելացնելու նպատակով կատարված են նստատեղերի իրար մոտեցում, ինչը թույլ չի տալիս նույնիսկ միջինից ցածր հասակ ունեցող անձին հարմարավետ ու ապահով երթևեկել: Աստված մի արասցե, վթարի դեպքում մարդկանց արագ ելքը ավտոմեքենայից գրեթե անհնար է:

Առանձնակի կցանկանայի բարձրաձայնել Երևանի շենքերի բակերի կողմից անմխիթար տեսարանների մասին:

Հասարակությանը Ծրագրի ընթացքի մասին տեղեկացված պահելու գործընթացը սխեմատիկ ներկայացված է նկար 3-ում:

[11] Կառուցապատման, վերանորոգման, հողային աշխատանքներին վերաբերող մրցութային ծրագրերը պետք է պարունակեն դրույթ աշխատանքներից հետո առաջացաց աղբը մաքրելու, իսկ, օրինակ, ճանապարհային աշխատանքների ավարտից հետո նոր ասֆալտը լիովին հավուր պատշաճի մանր քարերից մաքրելու դրույթ:

Նախնական փուլի նկատմամբ հետաքրքրություն

- Ծրագրի մասին հասարակությանը տեղեկացնելը: Հասարակության մոտ հավատի առաջացում Ծրագրի հաջողակ ընթանալու վերաբերյալ:
- Ծրագրի հաջողակ սկիզբը կառաջացնի հետաքրքրություն քաղաքաբնակների լայն զանգվածների մոտ: Հստակ և բանիմաց կատարվող առաջի քայլերը կնպաստեն քաղաքաբնակների օժանդակմանը Ծրագրի իրագործմանը: Առաջի փուլի ընթացքում քաղաքաբնակների հետ անմիջական հանդիպումները շատ էական են՝ հասարակության մոտ Ծրագրի նպատակների և իրականացնողների վերաբերյալ դրական առաջի կարծիքը ստեղծվելու համար:

Գույքահարկի բարձրացման մասին տեղեկատվությունը կառաջացնի մեծ թվով քաղաքաբնակների հետաքրքրությունը և վրդովմունքը:

- Ոլորտին վերաբերող օրենսդրություններում փոփոխությունների մասին հասարակության լայն զանգվածների տեղեկացում: Քաղաքապետարանի պաշտոնական կայքում, մամուլի էջերում քաղաքաբնակների հետ քննարկումների ծավալում: Մասնավորապես մեծ ուշադրություն է դարձվում գույքահարկի չափերի բարձրացման հետ կապված հարցերին:
- Գույքահարկի բարձրացման մասին տեղեկականալուց քաղաքաբնակների մոտ առաջանալու է վրդովմունք: Քաղաքային իշխանությունների և ստեղծվող կազմակերպության ղեկավարների պարտականությունն է լինելու վարել հստակ, ազնիվ, լիարժեք բացատրական աշխատանք քաղաքաբնակների վարձավճարների բարձրացման վերաբերյալ:

Քաղաքաբնակների մոտ Ծրագրի նպատակներին հասնելու վստահության ներշնչում: Լայնածավալ բացատրական աշխատանքներ, թափանցիկ գործելակերպ, հետևողական անկաշառ գործարքներ:

- Կենցաղային և էսթետիկ անվտանգության հարցերի քննարկումներ ՀԼՄ-ում: Քաղաքը աղտոտելու, մայթերը շինությունների տակ գրավելու, ավտոտնակներ կառուցելու երևույթների վարկաբեկում ՀԼՄ-ում: Շինարարական և վերանորոգման անփույթ աշխատանքներ կատարող կազմակերպությունների և անհատների զանգվածային վարքաբեկում: ՀԼՄ-նում քնադատվում են քաղաքի տնտեսությանը վնաս պատճառած բոլոր անձիք՝ անկախ զբաղեցրած դիրքից:
- Լայնածավալ բացատրական քարոզարշավի անցկացում քաղաքի բոլոր շրջաններում կենցաղային անվտանգության նորմերի պահպանման անհրաժեշտության և կարևորության վերաբերյալ: Քարոզարշավի ընթացքում շեշտ է դրվում նաև էսթետիկական անվտանգության՝ մաքրության պահպանման հարցերի վրա: Քաղաքաբնակներին հարկավոր է բացատրել, որ քաղաքի անբարետեսությունը անմիջապես ազդում է իրենց հոգևոր աշխարհի վրա:

Նկար 3

Իրենց նվիրվածությունը և պատրաստակամությունը օժանդակել Ծրագրի առաջընթացին ցուցաբերած քաղաքաբնակների մատուցած ծառայությունների հատուցում:

- Առաջարկվում է չծանրացնել Ծրագրի ընթացքը, իրականացնել այն հետաքրքիր ձևով: Այս Ծրագիրը կձախողվի, եթե կորչի հետաքրքրությունը հասարակության կողմից նրա կատարման նկատմամբ: Ծրագրի ընթացքը նպատակահարմար է իրականացնել վարչական տարածքների միջև մրցակցության ձևով. որ վարչական տարածքն է ավելի մաքուր, որում է զբոսնելը առավել անվտանգ: Վարչական տարածքների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովը կանցկացնի ուսումնասիրություն և կընտրի ամենաքիչ անփութություններ ունեցող վարչական տարածքը, ամենամեծ առաջընթաց արձանագրանձ վարչական տարածքը, որտեղ են բնակվում ավելի հոգատար քաղաքաբնակներ (ՈՉ ԹԵ ՄԱՏՆԻՉՆԵՐ, ԱՅԼ ՕՐԻՆԱՊԱՀ և ՀՈԳԱՏԱՐ ՔԱՂԱՔԱԲՆԱԿՆԵՐ) և այլն:
- Հասարակությունում առողջ մթնոլորտի ստեղծումը պետք է նպաստի այս և այլ ծրագրերի իրագործմանը:

Պարգևատրությունները կպահեն Ծրագրի ընթացքը հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

- Քաղաքի կենցաղային և էսթետիկական անվտանգության պահպանությամբ զբաղվող շատ քաղաքացիների համար պարգևավճարները կարողեն դառնալ ընտանեկան բյուջեի համալրման լուրջ աղբյուր: Քաղաքի տնտեսության առողջացմամբ մտահոգված քաղաքացիների թվի բարձրացումը զսպող գործոն կհանդիսանա խախտումներ նախատեսող 'անձանց' համար:
- Պարգևների վճարումը պետք է կատարվի անմիջապես խախտումը հաստատելուց հետո: Պարգևների արագ վճարումը քաղաքաբնակների մշտական ուշադրության տակ կպահի խախտում կատարողներին: Այն դեպքերում, երբ խախտումը հաստատվել է, սակայն խախտողը ձգձգում է տուգանքի վճարումը և գործը անցնում է ԴԱՀԿ-ին, պարգևավճարը փաստը արձանագրած քաղաքաբնակին վճարվում է քաղաքապետարանի հատուկ, տուգանքներից գոյացած հիմնադրամից, քաղաքապետարանին հետագա հատուցումով:

1

2 *<u>Ծրագիրը կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներում և բնակավայրերում բնակիչների կյանքի</u>*
3 *<u>կոմֆորտային պայմաններ ստեղծելու համար:</u>*

5. Հասարակության հետ համագործակցություն

Բնական է, նշված բոլոր ծրագրերի, միջոցառումների իրագործումը անհնարին կլինի առանց հասարակության լայն զանգվածների անմիջական մասնակցության, միջամտության, օժանդակության և, ամենակարևորը՝ ընդունման:

Ծրագրի հաջողվածության մասին կարելի կլինի վստահորեն հայտնել, երբ այն խթանած լինի՝

- ✓ քաղաքաբնակների քաղաքացիական գիտակցության ամրապնդմանը,
- ✓ օրինապահությունը, որպես մեծագույն արժեք քաղաքաբնակների կողմից իրականում ընդունմանը և առօրյա կյանքում իրագործմանը,
- ✓ հասարակական կյանքում, պետական մարմինների հետ փոխհարաբերություններում քաղաքաբնակների համոզվածությանը սեփական ջանքերով դրական փոփոխությունների հասնելուն,
- ✓ առօրյայում անձամբ քաղաքաբնակների և իշխանությունների կողմից ողջամիտ որոշումներ ընդունելու, իսկ սխալ կատարած քայլերի համար պատասխանատվություն կրելու զգացումի բարձրացմանը,
- ✓ անվայել, հասարակական ունեցվածքի փչացման արարքների անվախ և անկաշկանդ զանգվածային դատապարտմանը,
- ✓ քաղաքաբնակների պատրաստակամությանը օրինապահ մարմինների հետ միասին անօրինությունները բացահայտելու ուղղությամբ սերտ համագործակցությանը,
- ✓ օրինապահ մարմինների անօրինական գործողությունների զանգվածային արդար լուսաբանմանը,
- ✓ հասարակությունում առողջ մտածելակերպի ստեղծմանը, պետական մարմինների նկատմամբ քաղաքաբնակների մոտ վախի և անվստահության զգացումի վերացմանը,
- ✓ քաղաքաբնակների կողմից քաղաքային իշխանությունների աշխատանքի հարգանքի աստիճանի բարձրացմանը և գնահատմանը, բացասական երևույթների օբյեկտիվ քննադատմանը:

Քաղաքաբնակների օժանդակումը և մասնակցությունը բացասական երևույթների բացահայտման և դատապարտման հարցում պարտադիր պետք է խրախուսվի նյութապես և բարոյապես:

- Նյութական խրախուսման լավագույն տարբերակ է բացասական երևույթը բացահայտած անձին վճարել օրինազանցից տուգանված գումարի 30-70%[12]: Խրախուսման նման եղանակը լուծում է երկու հարց՝
  - Խրախուսում է հասարակության ներկայացուցիչների լայն զանգվածին մասնակցել օրինազանցների բացահայտման գործընթացին և
  - <u>Անձը տեսնում է, որ պետության կողմից իր կատարված աշխատանքը գնահատվում է և նա պետական լայնածավալ ծրագրի մասնակից է: Իր լուման ընդհանուր գործում գնահատվում է:</u>
- Պարտադիր է անցկացնել Ծրագրի իրագործմանը օժանդակող քաղաքացիների ամենամյա պարգևատրումներ: Անհրաժեշտ է, որ պարգևատրման արարողությունը կատարվի հանրապետության և քաղաքի ղեկավարության կողմից, ստանա ամենաբարձր արձագանքը

[12] Անօրինականությունը բացահայտած քաղաքաբնակին վճարվող պարգևի համամասնությունը վարչական տուգանքի չափից պետք է որոշվի մեկ ընդ միշտ և այլևս չհանդիսանա քննարկումների առարկա: Կոռուպցիոն ռիսկերից խուսափելու լավագույն միջոցն է չստեղծել կոռուպցիածին օրենքներ: Խախտումները կտեսակավորվեն և ըստ խախտման տեսակի կորոշվի խախտումը բացահայտող անձին վճարվող տոկոսը տուգանքի գումարից:

և լայնորեն լուսաբանվի: Անհրաժեշտ է հստակ որոշել անվանակարգերը՝ պատվավոր քաղաքաբնակ, քաղաքի ամենանվիրյալ քաղաքացի, բացասական երևույթների դեմ ամենաանհանդուրժող քաղաքացի և այլ պատվոգրեր ազգանվեր գործունեության համար:

Պետության կողմից բացասականը վարկաբեկելու հստակ քաղաքականություն անցկացնելու և հասարակության առաջավոր անձանց պարգևատրումները կօժանդակեն հասարակությունում գոյություն ունեցող «վատը լավի տեղ ներկայացնելու» սխալ և հիվանդ մոտեցումները և պատկերացումները վերանայելուն:

5.1. Հիվանդ և պարզունակ մտածելակերպ

Առանձնակի ցանկանում եմ բարձրաձայնել մեր հասարակության մի ստվար հատվածի մոտ խորհրդային տարիներից մնացած հիվանդ մտածելակերպի, աշխարհայացքի ու պատկերացումների մասին: Խոսքը գնում է վատ արարքները հերոսացնելու, վատ արարքներին խիզախության և «թասիբի» աուրա տալու պարզունակ սովորույթի մասին: Վատը լավի տեղը ներկայացնելու պատճառով է, որ այսօր մենք ունենք կեղտոտ մուտքեր, գողացված ծաղկամաններ, ջարդված նստարաններ... Հասարակության չկրթված, «թաղային հեղինակությամբ» տառապող, քրեածին զանգվածի պարզունակ մտածելակերպով այսօր իրենց առօրյայում առաջնորդվում են հասարակության զարգացած և բարձրագույն կրթություն[13] ստացած հատվածը: Ինչպես ասվեց, սա խորհրդային տարիների վատ մնացորդն է: Հասարակական ունեցվածքի փչացնելը չի կարող հանդիսանալ բարի արարք և վարկաբեկվելու փոխարեն գովաբանվել: Իսկ անձանց, ովքեր վարկաբեկում են վատ արարքները և տեսածի մասին հայտնում օրինապահ մարմիններ համարել **«մատնիչներ»**: Խորհրդային տարիների երեխաների «Պարտիզաններ» վնասարար խաղի վատ օրենքները հարկավոր է իսպառ հանել մեր հասարակության մտածելակերպից: Առողջ մտածելակերպը պետք է տիրի մեր հասարակությունում՝ հասարակական ունեցվածքին վնաս պատճառողը, ջարդողը, գողացողը պետք է մատնացույց արվի, իսկ նրա արարքը վարկաբեկվի: **Իսկ անձը, ով իր առողջությունը վտանգելով կանխում է հասարակական ունեցվածքի ոչնչացումը՝ արժանի է «Երևանի հերոսի» կամ Պատվավոր Քաղաքացի կոչմանը: «Մայթազավթիչը»** չի կարող լինել օրինակելի քաղաքաբնակ:

Ստեղծվող կազմակերպության գործունեության ևս մեկ մեծ ոլորտ կարող է հանդիսանալ քաղաքի անպարտաճանաչ բնակիչների կողմից հարկման դաշտից դուրս մնացող, առանց որևէ պետական ձևակերպումների վարձով տրվող բնակֆոնդի բացահայտումը: Հարկավոր է օրենսդրորեն սահմանել, թե նոր բացահայտված դեպքերից, վարչական տուգանքի որ մասն է պատկանելու քաղաքապետարանին: Բացի այդ վարձով տրվող բնակարաններից գանձվող եկամտահարկի 50% նպատակահարմար է տրամադրել քաղաքային բյուջե: Նույնպես կարելի է վարվել նաև սեփական բնակարաններում առանց հարկային մարմիններին տեղյակ պահելու այլ գործունեություն ծավալողների հետ՝ ԲՈՒՀ ընդունվողների հետ մասնավոր պարապող դասախոսների, աշակերտների հետ պարապող դասատուների, դերձակների և այլն: Հասարակական վայրերում ապօրինի տնտեսվարությամբ զբաղվող քաղաքաբնակների կողմից փակցված հայտարարություն-ները կօգնեն նման դեպքերի բացահայտմանը (հետաքրքիր է թե ինչու մինչ այժմ հարկային ծառայության աշխատակիցները չեն բացահայտում հարկերից այդ խուսափողներին): Համոզված եմ, որ վարչական շրջանների աշխատակիցների կողմից չգրանցված վարձակալությունների բացահայտումը ավելի դյուրին կկատարվի: Ամեն բացահայտված դեպքի համար բացահայտողը ստանալու է պարգևատրում վարչական տուգանքի 70% չափով: Հարկման այս հոդվածը կհանդիսանա քաղաքի բյուջեի համալրման կարևոր աղբյուր:

[13] Կրթական համակարգի բարեփոխումները առանձին խնդիր են: Ամեն դեպքում կարելի է փաստել, որ այն կրթական համակարգը, որի շրջանավարտները հեշտությամբ ընկնում են «թաղային հեղինակությունների» ազդեցության տակ արդեն իսկ լիարժեք չէ:

Վերջի պարբերությունում նշված գործելակերպը եվրոպական և հյուսիս-ամերիկյան երկրներում, Արաբական Էմիրություններում, Ճապոնիայում, Սինգապուրում և հաջողության հասած այլ զարգացած երկրներում հասարակության հետ պետական մարմինների համագործակցության գերիշխող ձևն է: Այդ երկրների քաղաքացիները հասկացել են, որ վատը բացահայտելը և մատնանշելը, բացասականը վերացնելը, վտանգավորը նախօրոք վնասազերծելը իրենց անմիջական օգտին է: Այդ երկրների քաղաքացիները հարգում և մեծարում են իրենց անվտան-գության համար հոգ տանող, բացասական երևույթները բացահայտող համաքաղաքացիներին և ցանկացած անձ իր պարտք է համարում բարձրաձայնել բացասական երևույթների մասին և անել առավելագույնը հանրային անվտանգությունը ապահովելու համար: Նման ապրելակերպը նրանց բարեկեցության երաշխիքն է. չէ որ այգիներում ջարդված նստարաններից իրենք են օգտվելու և իրենց երեխաները, մուտքի ջարդված պատուհաններից իրենց տներն են սառչելու, քանդված փողոցներով իրենք են քայլելու, իրենց կանանց կոշիկների կրունկներն են կոտրվելու, անփույթ և ցածր սարքած քիվերը (карниз) իրենց են վնասելու, նկուղների ցածր եզրաքարերը իրենց են ստիպելու լարված քայլել փողոցով, բակում “ժավելի սպիրտ” բղավող տատիկը իրենց է խայտառակելու կարևոր հանդիպման կամ հեռախոսազրույցի ժամանակ, բակի ասֆալտը թույլ տալ քանդելուց անձրևոտ եղանակներին տանից դուրս գալուց իրենց կոշիկներն են կեղտոտելու, մուտքերի բազրիքները գողանալ թույլ տալը հոգնած ժամանակ իրենց թույլ չի տալու հենվելով բարձրանալ…

Այժմ պարեկային ոստիկանությունը փորձում է ավելի խիստ վերահսկել կարգապահությունը Երևանի այգիներում: Սակայն լավագույն պատկերը կարգապահության առումով կարելի տեսնել «Բաղրամյան» մետրոյի կանգառին հարակից «Սիրահարների այգում», որի հսկողությունը կատարում են այգու անվտանգության աշխատակիցները:

Հիվանդ և պարզունակ մտածելակերպի, իսկ ավելի ստույգ՝ իմիջիայլոցության հետևանք է հաշմանդամների համար կառուցված, սակայն բացարձակ անպիտան հարմարությունները: Բավական է տեսնել «Բարեկամություն» մետրոյի հաշմանդամների համար նախատեսված հարմարությունների վիճակը…

Մեկ կարևոր հանգամանք ևս՝ գիտակից քաղաքաբնակ ունենալու միակ տարբերակն է դպրոցներում վարվելակերպի մշակույթի դասավանդումը: Ցավոք, ոչ բոլոր ծնողներն են ի վիճակի սովորեցնել իրենց զավակներին էթիկայի կանոններին…

6. Գույքահարկի մասին ՀՀ Օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն. բնակֆոնդի պահպանման վճարների չափերի վերանայում

1. Գույքահարկի համապատասխանեցումը անշարժ գույքի կադաստրային (երեք տարին մեկ անցկացնել կադաստրային գների համապատասխանեցում շուկայական գների հետ[14]) արժեքին թույլ կտա նախատեսել քաղաքի զարգացումը և պարզ ու գործնականում կառավարել քաղաքի ընդարձակման ուղղությունները: Բարձր գույքահարկը կընձեռի հնարավորություն լուծելու բազմաթիվ խնդիրներ, որոնք տարիներ շարունակ չէին գտնում իրենց լուծումը: Հնարավորություն կընձեռվի խուսափել նոր խնդիրների առաջացումից.

   a. Զանազան կրպակներից և ինքնաբուխ գյուղատնտեսական ապրանքների փոքր շուկաներից քաղաքի փողոցների ազատման խնդրի լուծման եղանակներից մեկը կարող է լինել.

   Միայն նոր կառուցվող շենքերի առաջի հարկերն են նախատեսվում առևտրական նշանակության տարածքների համար: Երևանի երկրորդական բնակֆոնդի շենքերի հիմնական զանգվածի առաջին հարկերը նախատեսված չեն որպես առևտրային տարածքներ: Իհարկե, մեծ քանակությամբ առաջի հարկի բնակարաններ այժմ օգտագործվում են որպես առևտրային նշանակություն ունեցող տարածքներ, սակայն դրանք բավական չեն: Հարկավոր է առաջի հարկերի բնակարանները առևտրային տարածքներ փոխարինելուն ուղղված համընդհանուր քաղաքային ծրագիր ընդունել: Այդ գործընթացը պետք է ներառի բնակարանների օգտագործման նշանակությունը փոխելու, անմիջապես փողոց դուռ բացելու թույլտվությունները ստանալու պարզեցում: Այս հարցի լուծմանը կնպաստի ի համեմատ շենքի մնացած հարկերի բնակարանների համար նախատեսված գույքահարկից առաջի հարկերի բնակարանների գույքահարկի ավելի բարձր հաստատումը, եթե դրանք չեն օգտագործվում որպես առևտրային տարածքներ[15]: Առաջին հարկը որպես առևտրային տարածք օգտագործելու դեպքում գույքահարկը կհավասարեցվի տվյալ գոտում գործող դրույքաչափի հետ: Նաև անհրաժեշտ է պարզեցնել բնակարանի օգտագործման նշանակությունը փոխելու և անմիջապես փողոց դուռ բացելու հետ կապված թղթաբանությունը և դրա արժեքը: Այժմ տնտեսվարողները ստիպված են մայթերի և գազոնների վրա կառուցել կրպակներ առևտրային գործունեություն ծավալելու համար: Գույքահարկի և սպասարկման վճարների ճիշտ որոշման դեպքում լուծվում են հետևյալ հարցերը.

   a. քաղաքը իսպառ ձերբազատվում է կրպակներից;
      i. վերականգնվում են մայթերը և եզրային խոտածածկերը;
      ii. **ստեղծվում է առևտրային տարածքների հոծ բազմություն, ինչը ստեղծում է հնարավորություն՝**
         (1) **առևտրային տարածքների վարձակալման գների կտրուկ նվազման, որն իր հերթին ⇒**
         (2) **ստեղծում է ամենանպաստավոր պայմանները առևտրային գործունեության զարգացման համար, որն էլ ապահովում է ⇒**
         (3) **նոր աշխատատեղերի ստեղծում և հարկային վճարների ավելացում[16]:**

---

[14] Ներկայում գոտիավորման աշխատանքներ կատավում են, սակայն շատ դեպքերում չեն համապատասխանում իրականությանը: Դրանից էլ հետևում է անշարժ գույքի կադաստրային արժեքի անհամապատասխանությունը շուկայական գներին:

[15] Կրպակների համար գույքահարկը պետք է հաստատվի կրկնապատիկ-եռակի անգամ ավելի բարձր քան շենքերի առաջի հարկերի համար (բարձր գույքահարկին կգումարվի նաև հողի հարկը և կրպակների շահագործումը կդառնա անարդյունավետ): Դա կնպաստի կրպակների փակմանը իսկ աշխատակիցները կանցնեն աշխատանքի բազմատիվ նոր խանութներում, որտեղ աշխատանքի պայմաններն էլ կլինեն ավելի բարենպաստ:

[16] Տես **Նկար** Ошибка! Только основной документ.:

Նկար 4

Գույքահարկը բարձրացվում է՝

- Շենքերի առաջի հարկերի համար (եթե դրանք չեն օգտագործվում որպես արևտրային տարածքներ);
- Եթե շենքերի առաջի հարկերը արևտրական նշանակության են դրանց գույքահարկը առնվազն երեք անգամ քիչ է կրպակների գույքահարկից:
- Կրպակների և տաղավարների համար, քաղաքը այդ տգեղ իրողությունից ազատելու նպատակով:

Շենքերի առաջի հարկերի բնակիչները պարտադրված են՝

- վաճառելու բնակարանները առևտրական կազմակերպություններին;
- սկսել ինքնուրույն առևտրային գործունեություն; եթե իրականացնում են՝ անցնել հարկման դաշտ;
- վարձակալմամբ հանձնել դրանք արևտրականներին. մեծաքանակ առաջարկի դեպքում կնվազեն վարձավճարները, իսկ պետ. և քաղաքային բյուջեները կհամալրվեն նոր հարկերով:

ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՎԵՐԱՆՈՒՄ ԵՆ ԿՐՊԱԿՆԵՐԸ

Բազմաթիվ գործարարներ ստանում են հնարավորություն դառնալ մատչելի առևտրային տարածքների տնօրինողներ

- նվազում են վարձակալման գները
- աշխուժանում է տնտեսությունը
- առաջանում են նոր ձեռնարկություններ

Ստեղծվում է ազատ և հավասար դաշտ տնտեսական գործունեություն ծավալելու համար

- ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՆ ԲԱԶՄԱԹԻՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ
- ԿՏՐՈՒԿ ԱՃՈՒՄ ԵՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՊԵՏ. և ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ
- ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՎԱԶՈՒՄ Է ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

b. Տանիքների վերանորոգման խնդիրը: Ներկայում քաղաքի բնակֆոնդի տանիքների գրեթե 70% անմխիթար վիճակում է (տանիքների վիճակին շատ պարզ կարելի հետևել Google Earth ծրագրի օգնությամբ): Քամիների և ձնհալի ժամանակ շենքերի տակով քայլելը դառնում է վտանգավոր: Բարձր գույքահարկի և սպասարկման վճարների պայմաններում այս հարցի լուծումը կարելի անցկացնել հետևյալ կերպ.

i. Նախաձեռնել մանսարդների կառուցումը միևնույն շենքի համար նույնատիպ, ճարտարապետի կողմից հաստատված նախագծով (աշխատանքները հեշտացնելու առումով նպատակահարմար է նախօրոք նախագծել մանսարդների մի քանի տիպային տեսակներ հետագայում բնակիչների ընտրությանը ներկայացնելու համար՝ շենքի վերջի հարկերի բնակիչների մեծամասնության հավանությունը ստացած նախագիծը կհանդիսանա կառուցման նախագիծ)[17]: Հարկավոր է խրախուսել վերջին հարկերում բնակվող, սակայն մանսարդա (վերնահարկ) չցանկացող կառուցել բնակիչներին վաճառել իրենց բնակարանները մանսարդա կառուցելու համաձայնություն տված քաղաքացիներին (ծրագիրը կարող է զգալի լուծել քաղաքաբնակներին բնակարաններով ապահովելու խնդիրը): Բոլոր նշված աշխատանքները կատարվում են լիցենզավորված շինարարական կազմակերպությունների և վերահսկվում ճարտարապետի կողմից: (Կարող են լինել նաև դեպքեր, երբ շինարարական կազմակերպությունները կսեփականացնեն շենքերի կտուրները, իրենց միջոցների հաշվին կկառուցեն բնակարաններ և հետագայում կվաճառեն ցանկացողներին: Տարբերակ կարող է լինել վերնահարկներում ուսանողների համար հանրակացարանների կառուցումը կամ հոսթելների բացումը՝ ինչը շատ եկամտաբեր է:)

Այն դեպքերում, երբ տեխնիկական պատճառներով շենքը չի կարող ունենալ վերնահարկ առաջ է գալիս տանիքների վերանորոգման խնդիրը: Տանիքների վերանորոգման հարցը ավելի նպատակահարմար է թողնել վերջի հարկի բնակիչների կարգավորմանը՝ ազատելով նրանց մի քանի տարվա գույքահարկից և պայման դնելով տանիքի պարտադիր վերանորոգումը համաձայն ներկայացված նախագծի և նրանում նշված շինարարական նյութերով:

c. Երևանյան բակերից ավտոտնակների տարհանման խնդիրը[18]: Ավտոտնակների վերացման հարցը գրեթե ամենածավալունն ու ամենացավալին է: Կանխատեսելի ապագայում հարցի միակ լուծումը ստորգետնյա ավտոտնակների կամ, ինչը ավելի գերադասելի է, ավտոկայանատեղեր կառուցումն է:

i. Անհրաժեշտ է հավասարեցնել ավտոտնակ չունեցող ՀՀ սովորական քաղաքացիներին «գարաժ» ունեցող ընտրյալների հետ: Ավտոտնակի համար գույքահարկի չափը հարկավոր է սահմանել առնվազն երկու անգամ ավելին, քան ավտոտնակ չունեցողները վճարում են վճարովի պահպանվող ավտոկայաններում մեքենաները կանգնացնելու համար: **Սա արդարացի է:** Ընդ որում՝ հարկավոր է տալ հստակ սահմանում ավտոտնակի չափերի վերաբերյալ: Ներկայում երկու մեքենա ունեցող ընտանիքը սովորական և ողջունելի փաստ է: Երկու մեքենայի համար նախատեսված ավտոտնակի (չափսերը և մնացած տեխնիկական պայմանները տես Հավելված 1) պետք է սահմանել

[17] Տիպային մասնավոր առանձնատների նախագծի մասին ՀՀ կառավարության կողմից արդեն առաջարկ եղել է: Նույն օրինակով պետք է լուծվի նաև մանսարդաների հարցը: Քայլ առաջ կարող է հանդիսանալ հետևյալ գործելակերպը (կանգառասրահների սպասարկման օրինակով, որոնց սպասարկումը հանձնված է մեկ կազմակերպության և նրանից էլ պատասխանեն պահանջում սահմանված նորմերի հետ անհամապատասխանությունների դեպում)՝ հայտարարել մրցույթ վերնահարկերի կառուցման ոլորտում: Կառուցապատումը անցկացնել միայն ժամանակակից թեթև կոնստրուկցիաներով և նյութերով, նույնատիպ և գեղեցիկ:

[18] Վրաստանի փորձը այս հարցում ուսումնալի է:

վճարովի կայանատեղում երկու մեքենայի համար նախատեսվող գումարի կրկնապատիկը, իսկ երկու մեքենայից ավել տարածք գրավելու պարագայում քառակամ հնգապատիկը (ըստ գոտու): Նույն պես հարկավոր է սահմանափակել նաև ավտոտնակի բարձրությունը՝ սահմանելով 2.6մ արտաքին եզրի բաձրությունը կրկնակի գույքահարկի սահմանում, իսկ դրանից ավել ցանկացած հատվածի համար կիրառել չորս- կամ հնգապատիկը: Հարկավոր է նորից չափագրել և դասակարգել գոյություն ունեցող ավտոտնակները[19]: Ստորգետնյա ավտոտնակների համար սահմանել գույքահարկի ավելի ցածր, քան վերգետնյա առանձին և վերգետնյա խմբավորված, չափ (ընդ որում օգտագործվող տանիքների դեպքում ցածր, չօգտագործվողների դեպքում բավական բարձր), վերգետնյա համախմբված գարաժների, որոնց կտուրները օգտագործվում են որպես խաղահրապարակներ գույքահարկի մեկ այլ չափ (արգելել օդափոխիչների առանձին ծխատարերի հանումը խաղահրապարակի հատվածում):

Քաղաքաբնակների մոտ իրականացվող Ծրագրի վերաբերյալ թյուր կարծիք չարմատավորվելու և իրականացվող բարեփոխումները իսկապես որպես մտածված քայլեր նրանց կողմից ընդունելու համար նպատակահարմար է ավտոտնակների չափսերը որոշելիս մեքենայի բազային չափ ընդունել մեծ ամենագնացի չափսերը[20]: Այս քայլը կվերացնի ցանկացած ասեկոսեների հիմքերը:

ii. Նոր կառուցվող շենքերի համար սահմանել պարտադիր պայման՝ ամեն բնակարանի համար երկու կայանատեղ ստորգետնյա ավտոկայարաններում, ընդ որում այդ կայանատեղերը հանդիսանում են բնակարանի անբաժան մասը[21]: Ընդ որում, եթե ավտոկայանատեղերը առանձնացված չեն պատերով և չունեն դարպասներ (տարածքի օգտագործման ՕԳԿ-ն բարձր է) սահմանել կայանատեղերի համար նախատեսված գույքահարկի նվազագույն չափը:

---

[19] Ավտոտնակների, նրանց չափերի հաշվառումը հստակ վարելու, այդ հարցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար ցանկալի է դրանցիծ ստացված գույքահարկը բաշխել (կամ հավասար, կամ քաղաքապետարանի բաժինը մեծ) երկու պետական հաստատությունների միջև՝ քաղաքապետարանի և ԱԻՆ-ի (կամ ճանապարհային ոստիկանության – վերջ ի վերջք այդ տարածքները պետք է ստուգվեն գոնե հակահրդեհային կանոններին համապատասխանելու վերաբերյալ) տալով ԱԻՆ կամ Ճ/Ո իրավունք անցկացնելու ավտոտնակների չափագրում քաղաքապետարանի հաշվարկների հետ համեմատելու նպատակով: Պետական երկու կառույցով պայքարել «գարաժների» չարիքի դեմ կլինի ավելի արդյունավետ բոլոր տեսանկյուններից՝ խուսափելու մարդկային գործոնից, կոռուպցիոն ռիսկերից և այլն:
Այն դեպքում, երբ վերգետնյա (երկաթե կամ բետոնե) ավտոտնակի սեփականատերը ցանկություն է հայտնում օտարելու իր ավտոտնակը, սակայն չի գտնում գնորդ, օտարվող գույքի սեփականատերը կարող է անհատույց հանձնել իր ավտոտնակը քաղաքապետարանի պատկանելիությանը: Քաղաքապետարանը իր հաշվին ապամոնտաժում է ավտոտնակը (ազատված տարածքը այլևս չի կարող օգտագործվել ավտոտնակի տակ) և օգտագործում իր հայացողությամբ նախապատվությունը տալով խաղահրապարակներին և կանաչ գոտիներին:

[20] Ամենամեծ ամենագնաց մեքենայի բարձրությունը կազմում է 2.5մ., երկարությունը 6.0մ., լայնությունը 2.5մ.: 11.6մ. երկարություն և 3.1 մ լայնություն (արտաքին չափսեր) ունեցող ավտոտնակը լիովին բավարարում է երկու ամենամեծ ամենագնաց մոքենաներ կանգնացնելու համար:

[21] Եթե բնակարանի ընթացիկ սեփականատերը չունի մեքենա չի նշանակում, որ բնակարանի հաջորդ սեփականատերն էլ պետք է զուրկ լինի դրանից:

7. Ստորաբաժանման (պետական մասնակցությամբ կազմակերպության) կառուցվածքն և բյուջեն

Ինչպես արդեն նշվել է Ծրագրում, նախկին թաղապետարանների գործունեությունը քաղաքում կենցաղային անվտանգության, մաքրության, էսթետիկական նորմերի ապահովման հարցում կարելի է համարել չկայացած:

Ներկայում, նման բացթողումներից խուսափելու համար անհրաժեշտություն է նախաձեռնող, վերահսկելի, արդյունավետ, արագ արձագանքող, կառույցի հիմնադրումը:

1. Կառույցի, որը չի լինի ծանրաբեռնված նախկին նմանատիպ կառույցների գործելակերպով և համալրված կլինի նոր աշխատակիցներով: Վերջի հանգամանքը առավել էական է՝ այս գործունեության համար չպետք է գործածվի գոյություն ունեցող կառույցներից որևէ մեկը. որպեսզի հասարակության մոտ նորից չառաջանա խափվածության զգացում՝ «քանդողները «ցանկանում են» սարքել, իրենց "փող դիզելու" գործեն սարքում և այլն» ***(օրինակ ինչպես ճանապարհային ոստիկանության կողմից Երևանում անցկացվող ամրագոտիների ակցիան՝ ոստիկանը ապահովում է մարդատար մեքենայի մեկ վարորդի անվտանգությունը, այն դեպքում, երբ կողքով անցնում է գերծանրաբեռնված երթուղային տաքսին և ուղևորների առողջությունը իրեն չի հետաքրքրում)***: Անցյալից ձերբազատված լինելը կօգնի նաև ստեղծվող կազմակերպության աշխատակազմին ազատ լինել որոշումների կայացման հարցում: Փոխվել է քաղաքը, դրա հետ մեկ տեղ պետք չէ վախենալ գործելակերպի և կառույցների փոփոխություններից: Նոր ժամանակների պահանջներին է պետք համապատասխանեցնել նաև քաղաքապետարանի գործելակերպը: Շատ լավ նախաձեռնություն է «մեկ պատուհան»-ի սկզբունքը: Բայց ժամանակն է եկել այն կատարելագործելու՝ զուգահեռ կիրառության մեջ դնելով քաղաքացիների էլեկտրոնային ձևով դիմելու տարբերակը: Ստորաբաժանումը ենթադրում է իր փաստահավաք գործունեության մեծ մասը կատարել հենց էլեկտրոնային ճանապարհով: Արտասահմանյան մեծ քաղաքների օրինակով նախատեսվում է նաև տեսախցիկներ տեղադրել քաղաքի տարբեր հատվածներում, սակայն դա արդեն ստեղծվող կազմակերպության կողմից ֆինանսական միջոցներ ստեղծելուց հետո: Ստեղծվող կառույցի սկզբունքն է լինելու չդառնալ «նոր բեռ հարկատուների ուսերին»: **Ստեղծվող Կառույցի բյուջեն համալրվելու է տուգանքների և նախագծվող կառույցների համապատասխանությունը կենցաղային և էսթետիկական անվտանգության նորմերին հաստատող պետտուրքերից:**

2. Կառույցի, որը կլինի մշտական շփման մեջ հասարակական անվտանգությունը, կարգ ու կանոնը, քաղաքի կենսունակությունը ապահովող համապատասխան կառույցների հետ (գազի խողովակների կատարված մոնտաժի եղանակը դժվար է համարել էսթետիկ): Կլինի մշտական շփման մեջ համալսարանների համապատասխան ամբիոնների հետ քաղաքի փողոցներում օգտագործվող առարկաների համար ժամանակակից, ավելի հարմար և անվտանգ լուծումներ գտնելու համար: Նույնիսկ քաղաքի փողոցներում տեղադրվող սալիկները պետք է համապատասխանեն կենցաղային անվտանգության նորմերին՝ այժմ Երևանում կան փողոցներ, որոնց սալիկապատումը պատրաստված է սայթաքուն նյութից և, հատկապես, ձմռանը դրանց վրայով քայլելը շատ վտանգավոր է: Անվտանգության ոչ մի նորմի չեն համապատասխանում բանուկ մայթերին խանութների դեպի մայթ կառուցված աստիճանները՝ այս հարցի լուծումը պահանջում է սերտ համագործակցություն ճարտարապետների հետ:

3. Հատկապես վատ է իրավիճակը կենցաղային և էսթետիկական անվտանգության առումով Երևանի զբոսայգիներում: Երեխաների զանգվածային կուտակման վայրում ամենուրեք տիրում է անփութություն, անտարբերություն կենցաղային և էսթետիկական անվտանգության հարցերին: Ստեղծվող կազմակերպության գործունեության ուղղություններից է լինելու հենց ժողովրդի զանգվածային կուտակման հատվածներում ընթացիկ և մշտական հսկողության անցկացումը:

4. Գործունեության անկողմնակալությունը ապահովելու համար աշխատանքների կազմակերպումը առաջարկվում է անցկացնել «սև ընդդիմախոսի» սկզբունքով: Քաղաքապետարանի կամ դատական որոշմամբ շինարարական խախտման վերացման դեպքերում նախագծի պատրաստումը հանձնվում է տենդերում հաղթած ճարտարապետական կազմակերպության, վերջինիս կողմից կազմված նախագիծը խախտում կատարած անձը կարող է իր հաշվին ներկայացնել մեկ այլ ճարտարապետական կազմակերպության ստուգման: Եթե խախտողի կողմից պատվիրված ճարտարապետական լուծումը նորմատիվ պահանջների սահմաններում ավելի էժան է ընդունվում է այդ տարբերակը:

5. Ստորաբաժանման հիմնադրումը թույլ է տալիս ավելի օպերատիվ կատարել Ծրագրում նշված միջոցառումները: Երևանի բարեկարգման ծրագրերը թևակոխում են նոր վերելքներ՝ այն, ինչը նախկինում թվում էր անհասանելի տեխնիկական լուծումների բացակայության պատճառով ներկայում իրականացվում է, իսկ սույն Ծրագրի հետևողական և արհեստավարժ իրականացման պայմաններում կլինի դյուրին և արագ: Ծրագրում առաջարկված լուծումները առաջի հայացքից կարող են թվալ ծայրահեղ՝ մասնավորապես ավտոտնակների դեպքում, սակայն Երևանի բակերում տիրող իրավիճակը ավելի ծայրահեղ է, քան առաջարկվող բուժամիջոցները:

6. Գույքահարկի չափի բարձրացումը նպատակահարմար է անցկացնել այս պահին: «Չկա չարիք առանց բարիք» բիբլիական ճշմարտությունը գործեց այս անգամ ևս. համաշխարհային ճգնաժամը բացահայտեց հայաստանյան անշարժ գույքի շուկայում տիրող անտրամաբանությունը և այժմ Հայաստանում անշարժ գույքի գները ձևավորվում են համաձայն առաջարկ-պահանջարկի շուկայական օրենքի առանց իշխանությունների ազդեցության:

   Գույքահարկի և բնակֆոնդի պահպանման սպասարկման վարձերի բարձրացման ուշացումը չափազանց բացասական է անդրադառնալու, մասնավորապես Երևանի կենտրոնի բնակֆոնդի պահպանման վրա: Քաղաքի 1947-73-ական թթ. կառուցված գեղեցիկ նախշերով ձևավորված շենքերին սպառնում է ոչնչացում՝ արդեն շատ շքամուտքերի եզրերը պատող գեղեցիկ նախշերը քայքայվել են և, լավագույն դեպքում, ծածկվել գաջով, իսկ շատ դեպքերում այդպես էլ մնացել են հիշեցնելով պեղումների վայր: Բաղրամյան պողոտայի վրա գտնվող առանձնատների (խորհրդային տարիներին «գրողների», «ճարտարապետների» և այլ նման արիմիություններ դարձած, իսկ իրականում, եթե չեմ սխալվում, դեսպանատների համար նախատեսված) գեղեցիկ պարիսպները առանց պատշաճ խնամքի քայքայվում են: **Չգիտես ինչու, ճարտարապետների միությունը, որը նախատեսված է նաև նման դեպքերի դեմ պայքարելու, չի բարեհաճում նույնիսկ վերանորոգել իր և իրենց հարևանությամբ գտնվող քանդվող պարիսպները:**

7. Ծրագրում նշված գույքահարկի և սպասարկման վճարների բարձրացման պատճառները անհերքելի են: Գույքահարկի և սպասարկման վարձերի վճարների բարձրացումը չի կարող հանդիսանալ հասարակական լարվածության լուրջ առիթ: Առավելագույնը ընդդիմախոսները կարող են օգտագործել այդ բարձրացումները իրենց PR անելու համար, սակայն ընդդիմախոսներին հակառակում ապացուցել դժվարություն չի ներկայացնի: Գույքահարկի, սպասարկման վճարների, շենքերի առաջի հարկերը առևտրային տարածքների վերածելու վերաբերյալ արված առաջարկները բխում են Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրից և համապատասխանում են զարգացման ուղղություններին: Այլ տարբերակներ արագ և՝ կարևորը բոլորի համար հավասար պայմաններով նվազեցնել անշարժ գույքի վարձավճարները և ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր, տվյալ պահին ոչ ոքի կողմից չի քննարկվում և չի առաջարկվում:

8. Ստեղծվող կազմակերպության աշխատաոճը լիովին համապատասխանելու է քաղաքային ներկայիս իշխանությունների գործելաոճին՝

a. հաճախակի հանդիպումներ քաղաքաբնակների հետ՝ վարչական շրջանների գրասենյակներում, քաղաքապետարանում, քաղաքի բակերում և այլ հասարակական վայրերում;
b. քաղաքաբնակների բողոքների, դիտողությունների, առաջարկությունների ամենօրյա ուսումնասիրություններ, բողոք ներկայացրած անձանց հետ պատճառների քննարկում;
c. աշխատանքներում տեխնիկական նոր միջոցների լայն կիրառում՝ քաղաքաբնակների հետ անմիջական կապի հիմնում էլեկտրոնային կապուղիների միջոցով;
d. քաղաքում կատարվող իրադարձությունների վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումների հաճախակի անցկացում;
e. քաղաքաբնակների առաջարկությունների վերլուծում և խոստումնալիցների ներկայացում հետագա քննարկումների;
f. միջազգային փորձի ուսումնասիրություն և հասանելիների ներդրում քաղաքային տնտեսություն:

Քաղաքային տնտեսությանը պահանջվում է անհապաղ միջամտում վերանորոգման հարցում: Վերանորոգման ուշացումը կառաջացնի ավելի մեծ խնդիրներ՝ այն ինչը հիմա կարելի է վերանորոգել էժան եղանակով հետագայում, ավելի մաշվելու դեպքում, պահանջելու է վերականգնում: Քաղաքաբնակներին հարկավոր է բացատրել, որ վարձերի բարձրացումից գոյացած վճարները ուղղվելու են շենքերի քայքայված երեսպատումների և քաղաքային իշխանությունների ենթակայության տակ գտնվող ենթակառուցվածքների վերականգմանը: Հակառակ դեպքում մոտ ապագայում մեծ և հաճախակի վթարներից խուսափել չի ստացվի (վառ օրինակ. էլեկտրաէներգիայի վարձավճարի բարձրացումից հետո անհամեմատելի բարելավվել է մատակարարումը): Մեծ ուշադրություն է դարձվելու ջրմուղի, կապի ծառայություններ տրամադրողների, էներգացանցի աշխատանքների իրականացմանը: Պարտադրվելու է իրենց կատարված շինաշխատանքներից հետո լիովին վերականգնել մայթերը և երթևեկելի մասերը:

Լրացուցիչ աղբյուրներ քաղ. Երևանի արտաբյուջետային հիմնադրամը համալրելու համար.

Նկար 5



Հավելված 1

Ավտոտնակների չափերի հաշվարկման տեխնիկական պայմանները:



- Երկու մետաղական, քարե, թե բետոնե, ավտոտնակների, միջև ընկաց տարածության համար (ABCD) հաշվարկվում է գույքահարկ ամբողջ տարածության համար և ավտոտնակների ողջ երկայնքով: Գույքահարկի չափը (եթե ABCD տարածության հետևանքով ավտոտնակների եզրագծերը գերազանցում են երկու մեքենայի համար նախատեսված ավտոտնակի չափերը ապա գործում է սովորականից բարձր գույքահարկի սանդղակը) հավասարապես բաժանվում է ավտոտնակների սեփականատերերի միջև (եթե այլ բան գրավոր պայմանավորված չե ավտոտնակների սեփականատերերի միջև):
- Երե ավտոտնակի կտուրի եզրերը (EF) դուրս են ընկնում գարաժի սահմաններից (առավելագույն թույլատրելին 5 (հինգ) սմ ամեն կողմից) այդ դուրս ընկնող տարածքի համար հաշվարկվում է գույքահարկ:
- Գարաժի կտուրի չափսերը հաշվարկվում են ըստ զբաղեցրած ամբողջ չափի (CKF): Ավտոտնակի տարածքից դուրս ընկած հատվածները (EF) ներառվում են տանիքի հաշվարկի մեջ:
- Ընդհանրապես, ավտոտնակի չափսերը հաշվարկվում են ըստ նրա արտաքին եզրագծերի, ներառելով բոլոր կորությունները և դուրս ընկած մասերը:

[i] ՀՀ ճանապարհային ոստիկանության պետի 27 ապրիլի 2010թ. տրված մամլո ասուլիսում և դրան հաջորդաց հեռուստատեսությամբ հեռարձակված հարցազրույցում ճ/ո պետը զեկուցեց բնագավառում իրականացվող բարեփոխումների մասին այդ թվում նաև կանգառասրահների տեղերի սխալ ընտրված լինելու մասին և նրանց մտադրությունը տեղեփոխել դրանք: Սակայն կանգառասրահների տեղերի ընտրությունը այդքանել դյուրին խնդիր չէ: Այս հարցում մտահոգիչ է այն, որ կանգառասրահների ընտրության ընթացքում ուղեվորների կարծիքը հաշվի չի առնվում. չեն անցկացվում հարցումներ, չի իրականացվում մոնիտորինգ և այլն: Հաճախակի կանգառասրահի տրամաբանորեն ճիստ ընտրված վայրում դրա տեղադրմանը խոչընդոտում են այդ վայրում կառուցված խանութների սեփականատերերը:

Որպես բացասական երևույթ նշենք նաև հետիոտնի փողոցը հատելու համար ընտրված լուսաֆորների թույլատրելի նշանի տևողության անբավար ժամանակը (Կիևյան փող. (Օրբելի փող. հատման մասը)):

[ii]

[iii]